Անհատականացում ցուցակը և ընտրեք Զայներ ներդիրը  
2.որպեսզի փոխեք ձայնը, որը ուղեկցվում է հաստուկ

- իրադարձություններով, սեղմեք օրագրային  
իրադարձություններ ցուցակում, իրադարձության անվանման  
վրա և ընտրեք պահանջվող ծայնը՝ Զայներ ցուցակում,  
3. ընտրված պարամետրերի ընդունման համար, սեղմեք Ընտրել  
կոճակը, որպեսզի ընդունեք ընտրված պարամետրերը և  
փակեք ք Զայների պատուհանը՝ սեղմեք **OK** կոճակը:

## Մեկնարկային ցանկի կարգավորումներ

Windows Vista-ն թույլ է տալիս Մեկնարկային ցանկում ամրացնել ծրագրերի նշանները դրանց արագ բռղարկման համար: Կարելի է փոփոխել նաև Մեկնարկային ցանկի տեսքը – օրինակ՝ բերել նրան «դասական» տեսքի (ինչպես Windows-ի նախկին տարբերակում):

### 1. Ծրագրերի նշանների ամրացումը Մեկնարկային ցանկում

Մեկնարկային ցանկում ծրագրերի նշանների ամրացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝

1. ընտրեք ծրագրի նշանը, որը հարկավոր է ամրացնել Մեկնարկային ցանկում,
2. ծրագրի նշանին սեղմեք մկնիկի աջ կոճակը և բացված ենթացանկից ընտրեք ք Ամրացնել ցանկում հրամանը (**Ակ.** 4.9):



Ակար 4.9 Նշանների  
ամրագրում

## 2. Ծրագրի նշանի հեռացումը Մեկնարկային ցանկից

Մեկնարկային ցանկից ծրագրերի նշանների հեռացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝


1. Ընտրեք Մեկնարկային ցանկում գտնվող ծրագրի նշանը,
2. սեղմեք մկնիկի աջ կոճակը ծրագրի հեռացվող նշանի վրա և բացված ենթացանկից ընտրեք *հեռացում այս ցուցակից* հրամանը:

## 3. Մեկնարկային ցանկի ներքին տեսքի կանոնավորումը

Մեկնարկային ցանկի ներքին տեսքի փոփոխման համար գոյություն ունեն մի քանի միջոցներ: Ընտրեք Մեկնարկային ցանկի ներդիրը ([նկ. 4.10:](#)):

- Փոխելով ցանկի ձևը (նրանք, ովքեր նախկինում աշխատել են Windows տարրերակի հետ, կարող են նախընտրել դասական ոճը):
- Հաճախ օգտագործվող ծրագրային նշանները մեծացնել կամ փոքրացնել՝ թվարկելով Մեկնարկային ցանկի ձախ կողմում:

Նկար 4.10 Մեկնարկային ցանկ ներդիրը



- **Մեկնարկային ցանկի** աջ կողմից հեռացնել համացանցի, էլ. փոստի ծրագրային նշանները (Համացանցի հետ աշխատելիս հանդես է գալիս Internet Explorer-ը, իսկ էլ. փոստի հետ աշխատելիս՝ +Windows փոստ ծրագրը):

**Մեկնարկային ցանկի** ձևը փոխելու համար կատարեք հետևյալ գործողությունները՝

1. մկնիկի աջ ստեղնով սեղմեք **Մեկնարկել** կոճակի վրա և բացված ենթացանկում ընտրեք **Հատկություններ** հրամանը,
2. որպեսզի վերադառնանք **Մեկնարկային ցանկի** «Դասական» տեսքին, որը կիրառվում է նախկին Windows-ի տարրերակում, տեղադրեք դրոշակը **Դասական Մեկնարկային ցանկ** տողի դիմաց,
3. ընտրված պարամետրերը կիրառելու համար, սեղմեք **Ընտրել** կոճակը: Ընտրված պարամետրերը կիրառելու և խնդրի **հատկությունների** պամելի պատուհանը փակելու համար՝ սեղմեք **OK**:

**Մեկնարկային ցանկի** այլ պարամետրերի կանոնակարգման համար հարկավոր է՝

1. **Մեկնարկային ցանկ** ներդիրում կտտեցնել Կանոնակարգ կոճակը,
2. **Կանոնակարգման** երկխոսության պատուհանում կատարել հետևյալ գործողությունները՝
  - ըստ լրելյան սկզբունքի **Մեկնարկային ցանկում** օգտագործվում են խոչըն նշաններ: Եթե **Մեկնարկային ցանկում** պարունակվեն ծրագրային շատ նշաններ, այն կաձի,
  - **Ցուցադրել** վերջին օգտագործված ծրագրեր հաշվիչի օգնությամբ ընտրեք հաճախակի օգտագործվող ծրագրերի նշանների քանակը, որոնք պետք է երևան **Մեկնարկային ցանկի** ձախ կողմում:

### Խնդրագոտու կանոնակարգումը


Չնայած իր ոչ մեծ չափերի՝ **Խնդրագոտին** պարունակում է բավականին շատ օգտակար տեղեկություններ: Դիտելով այն՝ կարելի է իմանալ, որ պատուհաններն են բաց և որոնք են միացված, ժամը քանիսն է, ինչպես նաև ինչ գործողություններ են գործում համակարգում: **Խնդրագոտու** կանոնակարգման համար կատարենք հետևյալ

գործողությունները՝

1.մկնիկի աջ ստենդով սեղմեք ազատ տարածքում և բացված ենթացանկից ընտրեք <ասլկություններ> հրամանը,

2.**Մեկնարկային ցանկ** և **Խնդրագոտու հատկություններ** երկխոսության պատուհանի գործիքները ներդրված խնդրի պամելում, թույլ են տալիս ներառել հետևյալ փոփոխությունները (**Ակ. 4.10:**)

- Կողպել Խնդրագոտին կամ ընդհակառակը՝ հանել այն կողպեքից: Այդ ֆունկցիայի համար տեղադրեք դրոշակը **Ամրապնդել Խնդրագոտին տողի դիմաց:**
- Թաքցնել Խնդրագոտին, որպեսզի էկրանին մնան ազատ տեղներ: Դրա համար տեղադրեք դրոշակ՝ **Ավտոմատ թաքցնել** Խնդրագոտին տողի դիմաց: Թաքցված Խնդրագոտին դուք կարող եք վերադարձնել էկրանին ամեն դոպե, տեղաշարժելով մկնիկի նշորդը **Աշխատանքային սեղանի** ստորին մասով:
- Պատկերել Խնդրագոտում արագ թողարկման նշանները՝ համացանցի, Windows Media և այլ ծրագրերով աշխատելու համար:
- Որպեսզի կիրառեք տվյալ պարամետրերը, կտտեցրեք **Ընդունել կոճակը**. Խնդրագոտի և Մեկնարկային Ցանկ պատուհանները փակելու համար, սեղմեք **OK** կոճակը:



**Նկար 4.11 Խնդրագոտու ներդիր**

## ԳԼՈՒԽ 5

### Աշխատանք նիշքերի և պանակների հետ

Մշտապես աշխատանքը համակարգչի հետ ավելի և ավելի փաստաթղթերի քանակ է ավելացնում: Բնականաբար անհրաժեշտ են դրանք ինչ որ կերպ դասավորել: Հարկ է նշել, որ նիշքերի և թղթապանակների կարգավորումը երկար ժամանակ չի պահանջում և պահանջում է ընդամենը մի քանի կանոնների իմացություն:

#### 1.Նիշքերի և թղթապանակների կազմակերպման հիմնահարցերը

Նիշքերի ճիշտ կազմակերպման ունակությունը շատ կարևոր է սկսնակների համար: Կարևոր է նաև նրանց համար, ովքեր աշխատում են համակարգչի հետ արդեն որոշակի ժամանակ և կարիք ունեն դասավորել կուտակված փաստաթղթերը: Հաջորդ պարզ կանոնների իմացությունը օգնում է հեշտացնել համակարգչի հետ աշխատանքը:

#### 2.Թղթապանակների կառույցի ստեղծումը

Մինչդեռ բազմազան նիշքեր կուտակելը, ձեր համակարգչում ստեղծեք թղթապանակի կառույցներ: Բոլոր նիշքերը կարելի է պահել *Document* (Փաստաթղթեր) թղթապանակում, հետզհետեւ ստեղծելով նրանում մի քանի այլ թղթապանակներ: Նրանցից յուրաքանչյուրում կտեղակայվեն համակցված փաստաթղթեր:

Օրինակ՝ դուք կարող եք ստեղծել առանձին թղթապանակ յուրաքանչյուր տեսակի փաստաթղթերի համար (նամակներ, աղյուսակներ, հրատարակություններ և այլն) կամ ամեն թղթապանակ նախատեսված իրադարձության համար: Այստեղ կհանապատասխանի ամեն տեսակի կազմակերպված սխեմա - կարևորն այն է, որ դուք կկարողանաք հեշտությամբ գտնել ձեզ հարկավոր նիշքերը:


- Օգտագործեք նիշքեր և թղթապանակներ պարունակող անուններ: Առաջին անգամ պահպանելով նիշքը հարկավոր է տալ նրան անվանում: Տալով նիշքերին նրանցում պարունակվող թեմային համապատասխան անվանում, դուք միանգանյան կիասկանաք՝ ինչ ինֆորմացիա է պարունակում և այլն:
- Նիշքերի և թղթապանակների (Folder) կրկնօրինակման ստեղծում: Որպեսզի պաշտպանեք ձեր տվյալները, ստեղծեք դրանց կրկնօրինակները և պահեք մեկ այլ տեղում (2-րդ կոշտ սկավառակում, կոմպակտ սկավառակում, հիշողության

քարտում և այլն): Եթե խոսքը գնում է գործնական կարևոր տեղեկության մասին, իմաստ ունի օգտվել հատուկ մագնիսային ժապավենից՝ հատկացված արխիվային տեղեկությունների համար:

- Հեռացված անպետք նիշքեր և թղթապանակներ (Folder): Կոչտ սկավառակի գերպարունակումը դժվարեցնում է և դանդաղեցնում է համակազոչի հետ աշխատանքը: Անպետք նիշքերը հարկավոր է ժամանակ առ ժամանակ հեռացնել:


### 3. Պանակների(Folder-ի) պատուհանը

Թղթապանակի բացման ժամանակ Աշխատանքային սեղանին հայտնվում է թղթապանակի պատուհանը: Այդ պատուհանում, բացի իր պարունակությունից, կան բազմաթիվ տարրեր, որոնք նշանակված են, որ օգնեն օգտվողին աշխատելու Windows Vista-ով և դեկավարվեն նիշքերով և թղթապանակներով (Folders): Հասցեների տողը գտնվում է պատուհանի վերին հատվածում և պարունակում է ընթացիկ թղթապանակի տեղը (**նկ. 5.2**): Նկար 5.1-ում ներկայացված է տիպիկ թղթապանակը (Folder)` իր բոլոր տարրերով:



Նկար 5.1 Windows Vista օպերացիոն համակարգի թղթապանակի պատուհանը իր բաղադրիչ տարրերով

Ընթացիկ դասավորվածությունը փոխելու համար կատարենք հետևյալ գործողությունները՝



Նկար 5.2 Հասցեի տող: Այստեղ տեսնում ենք որ գտնվում են Պատկերներ պանակում

- սեղմեք Հասցեի տողում մեջբերման վրա՝ համապատասխան պահանջվող դասավորվածքին
- Հասցեի տողում ներմուծենք պահանջվող դասավորվածքի հասցեն:



Նկար 5.3 Հասցեի տողի օգնությամբ նոր թրապանակի անցում

Սեղմեք նրա անվան վրա, որպեսզի անցնենք դասավորման, որի անվանումը երևում է Հասցեի տողում, որպեսզի անցնենք դասավորման՝ պարունակող ներթղթապանակի դասավորմանը, որի անվանումը արտացոլվում է Հասցեի տողում, սեղմենք վաքի վրա, որը գտնվում է դասավորման անվանման աջ կողմում, այնուհետև սեղմեք բացված ցուցակում պահանջվող դասավորման անվանման վրա (նկ. 5.3):

- Հասցեի տողում նոր դասավորում ստեղծելու համար հարկավոր է՝
- սեղմեք մկնիկի ստեղնը Հասցեի տողում, ընթացիկ անվան դասավորման աջ կողմում, որնէ ազատ տարածքում
  - կատարեք հետևյալ գործողությունները.
    - դասավորման մեջամասնության համար մուտքագրեք ամբողջ ուղին (օրինակ՝ C:\users\public), այնուհետև սեղմել «Enter» ստեղնը
    - որոշ դասավորությունների համար կարելի է մուտք անել միայն անունը (օրինակ՝ փաստաթղթերը (Documents), որից հետո սեղմել Enter ստեղնը):

Դասավորման ամբողջ հասցեների տող անցնելու համար կարելի է

ցուցադրել միայն անունը (համակարգիչ, կոնտակտներ, պանել, կառավարում, փաստաթղթեր (Documents), խաղեր, երաժշտություն, պատկերներ, աղբարկը, և այլն):

#### 4.Կոճակներ՝ «Առաջ և Ետ»

**Առաջ և Ետ** կոճակները դասավորված են թղթապանակի պատուհանի ձախ կողմում հասցեի տողից և նախատեսված են վերջերս գործածված թղթապանակների տեղավորման համար: Սեղմեք **Ետ** կոճակը՝ ցուցադրելու նախկին թղթապանակի պատուհանը: **Ետ** կոճակի գործածումը ակտիվացնում է **Հաջորդ** կոճակը, որը թույլ է տալիս անացնել հաջորդ թղթապանակին: **Ետ** և **Առաջ** կոճակները աշխատում են հասցեի տողի հետ համատեղ՝ փոխարինելով թղթապանակը (Folder), հասցեի տողի օգնությամբ, դուք կարող եք օգտվել **Ետ** կոճակից, որպեսզի վերադառնաք նախորդ թղթապանակին:

#### 5.Փնտրման դաշտ

**Փնտրման դաշտը** տեղակայված է թղթապանակի պատուհանում՝ Հասցեի տողի աջ կողմում, այն նախատեսված է նիշքեր և թղթապանակներ գտնելու համար, որոնք տեղակայված են ընթացիկ թղթապանակում: **Փնտրման դաշտը** ֆիլտրացնում է թղթապանակի մասին ընթացիկ պատկերացումը մուտք գործող տեքստի հիման վրա: Հավաքագրման կրիտերիան հանդիսանում է փնտրման դաշտում տեքստի հանընկնումը նիշքերի կամ թղթապանակների հատկությունների հետ, ինչպիսին են օրինակ՝ անուն, տեսք, տիպ և այլն: Փնտրումը տեղի է ունենում ինչպես ընթացիկ, այնպես էլ նրանուն գտնվող թղթապանակում:


#### Անուն

Անունը հատուկ է նիշքերին և թղթապանակներին (Folders): Որպեսզի կատարենք որոնում **Անվան** միջոցով, հարկավոր է ներմուծել նիշքի կամ թղթապանակի (Folder) անվան մի մասը որոնման դաշտում՝ օրինակ՝ որպեսի գտնենք որևէ նիշք «քննական տոմսեր՝ ուսանողների հանար.doc» անվանումով, հարկավոր է որոնման դաշտում մուտքագրել քննական տոմս, ուսանող և այլն (**Ակ.** 5.4):

## Setup

### **Նիշքի ընդհանուր նկարագրություն:**

Անձնական նիշքերի մեծամասնությունը հետևյալն են՝ փաստաթղթեր (documents), նկարներ և երաժշտություն: Որպեսզի գտնենք մեզ անհրաժեշտ նիշքը, հարկավոր է որոնման դաշտում նույտը անել անվանման որոշակի մասը: Օրինակ՝ որպեսզի գտնենք տեստային բոլոր նիշքերը՝ էլեկտրոնային առյուսակները և շնորհանդեսների նիշքերը, որոնման դաշտում նույտքագրեք doc, documents և այլն:



**Նկար 5.4 Պահակի պարունակությունը միչև որոնման գոտի ուրեմն տարր մուտքագրելը**

(նկար JPEG), MP3 (տարածված թվային առողջության պահակ) և այլն: «Որոնում» կատարելու համար, մուտքագրեք նիշքի ընդլայնումը օրինակ՝ որպեսզի գտնենք բոլոր պատկերները JPG ֆորմատում, որոնման դաշտում մուտքագրեք Jpg:

## Նշում

Նկարագրության համար նիշքին ավելացված որևէ բառ կամ արտահայտություն (որոնում) կատարելու համար, ըստ նշանի, որոնման դաշտում մուտքագրեք որևէ նշում, որպեսզի գտնենք այն նիշքերը, որոնցում եղել են նման նշաններ:

## Հեղինակ

Նիշքի ստեղծողը անձի անունը, հեղինակով որոնում կատարելու համար, որոնման դաշտում մուտքագրեք անվան որոշակի մասը կամ ամբողջ անունը, որպեսզի տեսնենք նրա ստեղծված նիշքերի ցուցակը:

## Տիպ

### **Նիշքերի ավելի կոնկրետացված նշանակություն:**

Նիշքի տեսակը որոշում են վերջին մի քանի նշաններով նիշքի անվանման մեջ՝ անվանակոչված նիշքի անվան ընդլայնմամբ: Ավելի տարածված տեսակներ են DOC (document Microsoft Word), XLS (էլեկտրոնային առյուսակ Microsoft Excel), jpg (նկար JPEG), MP3 (տարածված թվային առողջության պահակ) և այլն:

## 6. Գործիքների գոտին


Գործիքների գոտին գտնվում է թղթապանակի պատուհանի վերնամասում **Ետ** և **Առաջ** կոճակների, Հասցեի տողի և Որոշման դաշտի տակ: Գործիքների գոտին թույլ է տալիս կատարել այնպիսի գործածական խնդիրներ, ինչպիսին են նշչքերի և պանակների փոփոխությունը, նրանց կրկնօրինակումը կրոնպակում սկավառակում կամ նկարների ցուցադրումը գեղարվեստորեն: Գործիքների գոտու կոճակները փոփոխվում են ընտրված նշչքի պարունակության համաձայն: Օրինակ՝ պատկերների նշչք ընտրելիս Գործիքների գոտու վրա հայտնվում է **Դիտում** կոճակը:

### Անցման ոլորտ

Անցման ոլորտը (նկ. 5.5), տեղակայված է թղթապանակի պատուհանի ձախ մասում՝ ինչպես հասցեի տողը: Թույլ է տալիս փոփոխել ընթացիկ դասավորվածքը: Ընտրված հղումներ բաժնում, անցման ոլորտում պարունակում են հղումներ օգտվող անձի այնպիսի ստանդարտ նշչքերի թղթապանակներ, ինչպիսին են՝ փաստաթղթեր, երաժշտություն, պատկերներ: Թղթապանակ բաժնի **Անցման ոլորտում** արտացոլված են համակարգչի թղթապանակների հիերարխիկ կառույցը:

Որպեսզի բացեք **Թղթապանակի** բաժնը՝ սեղմեք **Թղթապանակ** կոճակի վրա:

Հիերարխիկ դասավորվածությամբ թղթապանակի վերնամասում գտնվում է **Աշխատանքային սեղանը**: Թղթապանակի պարունակությունը հիերարխիկ տեսնելու համար, սեղմեք թղթապանակի անվան վաքի վրա՝ տեղակայված Folder-ում, որը ցույց է տալիս աջ: Սեղմեք վաքի վրա, որը ցույց է տալիս աջ և ներք, որպեսզի թաքցնեք թղթապանակի պարունակությունը: Օրինակ, դուք կարող եք թաքցնել թղթապանակի պարունակությունը, եթե այն ներկայումս ծեզ հետաքրքիր չէ: Թղթապանակի բաժնին փակելու համար, նորից սեղմեք թղթապանակի վրա:



Նկար 5.5 Պատուհանի Անցման ոլորտը

## Տեղեկատվության ոլորտ


Այս ոլորտում թղթապանակի պատուհաններում արտացոլվում են մասնատված նիշքի և թղթապանակի ստանդարտ հատկությունները: Դրանցից են՝ անունը, տեսակը, չափսը, հեղինակը, ամսաթիվը և այլն:

### Դիտման ոլորտ

Այս ոլորտում թղթապանակի պատուհանում արտացոլվում են այնպիսի նիշքերի տիպեր, ինչպիսիք են՝ փոստը, տեսքային նիշքերը կամ պատկերների նիշքերը: Թղթապանակների պատուհանների մեջ մասում **Դիտման ոլորտը** ըստ լրելյայն սկզբունքի չի արտացոլվում: Եթե դուք ուզում եք տեսնել **Դիտման ոլորտը**, սեղմեք **Դասավորել** կոճակը, որը տեղակայված է թղթապանակի պատուհանի **Գործիքների գոտում** և ընտրեք – *Տեղադրում – Դիտման գոտի հրանանը*:


### Համակարգիչ-թղթապանակ

Համակարգիչ թղթապանակը կապահովի մուտքը դեպի կոշտ սկավառակ, կոնդակտ-սկավառակ, DVD-սկավառակ և այլն, որոնք միացված են համակարգչին: Բացի այդ, այս թղթապանակից հասանելի են այլ համակարգչին միացված պարագաներ, ինչպիսին են ներքին կոշտ սկավառակը և թվային տեսախցիկը: Որպեսզի բացենք Համակարգիչ թղթապանակը պատուհանը, պետք է սեղմել **Մեկնարկել** կոճակը և **Համակարգիչ հրանանը** (**նկ.5.6**):



### **Նկար 5.6 Համակարգիչ պանակ**

Ըստ լրելյան սկզբունքի Windows Vista օպերացիոն համակարգը խմբավորում է համակարգի սկավառակի նշանները ըստ տեսակի, ինչպես ցուցադրված է **5.8 նկարում**: Սկավառակի պարունակությունը (**նկ.5.9**) դիտելը շատ ոյուրին է, բավական է մկնիկով երկակի սեղմել նրա նշանին, որը գտնվում է **համակարգիչ թղթապանակի** պատուհանում:



## Նկար 5.7 С: Կոշտ սկավառակի պարունակությունը

### Նոր թղթապանակի ստեղծում

Նոր թղթապանակ կարելի է ստեղծել յուրաքանչյուր թղթապանակում: Կատարեք հետևյալ գործողությունները՝

1. Ծնուրեք այն թղթապանակը, որում ցանկանում եք ստեղծել մեկ այլ թղթապանակ
2. մկնիկով սեղմեք **Դասավորել** կոճակինը, որը տեղակայված է **Գործիքների** գրառու պատուհանի թղթապանակում և բացվող Ենթացանկում ընտրեք **Նոր թղթապանակ** հրամանը: Թղթապանակի պատուհանում կհայտնվի նոր թղթապանակի նշանը, իսկ նրա անունը կառանձնացվի (**Ակ. 5.8**)



### **Նկար 5.8 Նոր թղթապանակի անվան փոփոխում**

3. մուտքագրեք նոր թղթապանակի անվանումը և սեղմեք **«Enter»** ստեղնը:

## 7.Նիշքերի և պանակների տեղափոխությունն ու կրկնօրինակումը

Նիշքերի և պանակների հետ աշխատելիս առավել հաճախ օգտագործվող գործողությունները տեղափոխությունն և կրկնօրինակումն են: Նիշքերի և թղթապանակների կրկնակի կրկնօրինակների ստեղծումը, կարող է դաշնալ արխիվային անհրաժեշտություն, կամ, երբ պետք է այն մեկ այլ տեղ տեղափոխել (օրինակ՝ կոմպակտ սկավառակ): Որպեսզի կրկնօրինակեք նիշքերն ու թղթապանակները, կատարեք հետևյալը՝

- որևէ նիշքի առաձնացման համար կտտեցրեք նրա նշանը
- որպեսզի նշեք մի քանի նիշքեր կամ թղթապանակներ, սեղմեք և պահեք «Ctrl» ստեղնը, որից հետո հերթականությամբ նշենք հարկավոր նիշքը կամ թղթապանակը ([Ակ.5.9](#))



**Ակար 5.9 Մի քանի նիշքերի (նիշքերը) ընտրությունն անկախ հերթականությամբ**

- որպեսզի ընտրեք մի շարք հերթականությամբ շարված նիշքեր կամ թղթապանակներ, մկնիկով սեղմեք առաջին նիշքի կամ թղթապանակի նշանին: Սեղմեք և պահեք «Shift» ստեղնը, որից հետո մկնիկով սեղմեք վերջին նիշքի կամ թղթապանակի նշանին: Windows Vista-ն կառանձնացնի ձեր իսկ կողմից նշանակված նիշքերն ու թղթապանակները, ինչպես նաև այն նիշքերն ու թղթապանակները, որոնք գտնվում են նրանց միջև ([Ակ. 5.10](#)) ցուցադրեք սկավառակի կամ թղթապանակի

պարունակությունը, որտեղից անհրաժեշտ է կրկնօրինակել (տեղափոխել) ձեր կողմից նշված տարրերը սեղմեք **Դասավորել** կոճակին՝ և բացված ցանկում ընտրեք **Տեղադրել** հրամանը:

Կրկնօրինակման ժամանակ բոլոր տարրերը հասանելի կլինեն ինչպես նախկին, այնպես էլ նոր վայրում: Հշեք, որ թղթապանակի տեղափոխումը իր հետ կրում է իր ամբողջ պարունակությունը:




### **Նկար 5.10 նիշքերի (նիշքի) ընտուրելուն հերթականությամբ**

## **8. Նիշքերի և թղթապանակի կրկնօրինակումը կոմպակտ-սկավառակում**

Նիշքերի կրկնօրինակումը կոմպակտ-սկավառակմերում և DVD սկավառակմերում շատ լայն տարածում ունեն: Windows Vista-ն առաջարկում է այդ կրկնօրինակման արագ միջոց՝ Ենթացանկից **Ուղղարկել** հրամանի օգնությամբ (Ակ. 5.11):

1. Տեղադրեք կոմպակտ-սկավառակը կամ DVD-ին (որոնք բավականին ազատ տարածք են պարունակում), համակարգչի սկավառակի համար նախատեսված տեղում:
2. Առանձնացրեք նիշքերն ու թղթապանակները, որոնք անհրաժեշտ են ձայնագրել կոմպակտ կամ DVD սկավառակում:
3. Մկնիկի աջ ստեղնով սեղմեք յուրաքանչյուր ընտրված տարրին և բացված Ենթացանկից ընտրեք **Ուղղարկել** հրամանը:



Նկար 5.11 Ուղղարկել իրամանի ընտրման  
արդյունքում բացված ենթացանկը

4. Ընտրեք այն սարքային համակարգը՝ ձայնագրելու սկզբանակը, Ուղղարկել իրամանով: Ձեր կողմից ընտրած նիշը բարեկանությամբ պահպանվեն:

## 9.Նիշքի անվանափոխություն

Եթե ընթացիկ նիշքի անվանումը չի համապատասխանում նրանուն եղած պարունակությանը, նիշքը կարելի է անվանափողել: Մեկ անգամ կարելի է անվանափոխել միայն մեկ նիշք:

1. Ընտրեք այն նիշքի նշանը, որը հարկավոր է անվանափոխել:
2. Սեղմեք Դասավորել կոճակին՝ և բացող ենթացանկում ընտրեք Անվանափոխել իրամանը: Ընթացիկ նիշքի անունը կառանձնացվի՝ ինչպես պատկերված է Ակ.5.12-ում:
3. Մուտքագրեք նիշքի նոր անունը և սեղմեք «Enter» և նիշքը կանվանափոխվի:



Նկար 5.12 Ընթացիկ նիշքի անվանափոխություն

Աշխատանքային սեղանում մկնիկի ծախս ստեղի կտտոցով բացված ենթացանկից դուք կարող եք ընտրել Անվանփոխություն հրամանը:


## 10. Նիշքերի հեռացումն ու վերականգնումը

Կոչտ սկավառակի նիշքերով ծանրաբեռնվածությունը նշանակալիորեն դժվարեցնում է նրանց կազմակերպումն ու դանդաղեցնում է համակարգչի հետ աշխատելու ժամանակը: Այդ իսկ պատճառով հարկավոր է ժամանակ առ ժամանակ հեռացնել անպետք նիշքերը՝ Windows Vista-ն նիշքերը չի հեռացնում վերջնականապես: Հեռացված նիշքերը ըկնում են Աղբարկը, որտեղից նրանց կարելի է ետ վերադարձնել:

## 11. Նիշքերի հեռացում

Նիշքի հեռացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝

- Եցել և առանձնացնել հեռացվող նիշքը,
- սեղմել Դասավորել կոճակին և բացվող ենթացանկում ընտրել Հեռացնել հրամանը հաստատել նիշքի հեռացումը (նկ. 5.13)



Նկար 5.13 Windows Vista օպերացիոն համակարգը նախքան նիշքի հեռացումը կստեղծի հնարավորություն ևս մեկ անգամ հաստատելու ծեր որոշումը

- սեղմել Այլ կոճակին, որպեսզի հեռացվի նիշքը:


## 12. Նիշքի վերականգնում

Windows Vista օպերացիոն համակարգի շնորհիվ մենք կարող ենք վերականգնել Աղբարկը գտնվող նիշքերը:

Վերականգնան համար անհրաժեշտ է՝

1. բացեք Աշխատանքային սեղանին գտնվող Աղբարկը : Եկրանին կհայտնվեն նրանում պարունակվող բոլոր նախկնում հեռացված նիշքերը, թղթապանակները և այլն (նկ. 5.14),

2. առանձնացնել նիշքի վերականգման նշանը,
3. մկնիկով սեղմել Վերականգնել օբյեկտը կոճակին՝ տեղակայված գործիքների պանելի թղթապանակի պատուհանին: Նիշքը կհեռացվի աղբարկողի և կվերադառնա իր տեղը,
4. ընտրեք Փակել հրամանը, որպեսզի փակեք աղբարկողի պատուհանը:



**Նկար 5.14 Աղբարկում կհայտվեն բոլոր նիշքերը, նշանները և պանակները որոնք ջնեջ եք**

### 13. «Աղբարկող» պարունակության մաքրում

Աղբարկող պարունակությունը սկավառակում տեղ է գրավում, այդ իսկ պատճառով ժամանակ առ ժամանակ պետք է այն մաքրել: Մաքրման ընթացքում նրանում գտնվող նիշքերը ջնջվում են և դրանց վերականգնումը դառնում է անհնարին:

Որպեսզի մաքրենք աղբարկող հարկավոր է կատարել հետևյալ գործողությունները՝

1. բացեք Աշխատանքային սեղանին գտնվող Աղբարկող,
2. ուշադիր զննեք աղբարկող պարունակությունը և վերականգնեք բոլոր այն նիշքերը, թղթապանակները, որոնք կարող են դեռ լինել ծեզ համար պիտանի,
3. մկնիկով սեղմեք Մաքրել աղբարկող կոճակին, որը տեղակայված է գործիքների պանելին: Windows Vista-ն կիսնդրի ծեզ հաստատել ծեր որոշումը,
4. ընտրեք Այո, որպեսզի մաքրեք աղբարկողը:

## 14. Նիշքերի կծկում

Դուք կզարմանաք , թե որքան արագ կարող է կոչտ սկավառակը լցվել բազմազան նիշքերով: Որպես կանոն, համակարգչում նիշքերի մեծամասնությունը վերաբերվում են «դրանք ինձ պետք չեն, բայց համենայն դեպք թող մնան» տիպին: Նաև ատիպ նիշքերը պարտադիր պետք է պահպանել «կծկված» թղթապանակներում:

### Նիշքերի տեղավորումը կծկված թղթապանակում

Որպեսզի նիշքերը տեղավորենք կծկման թղթապանակում՝ հարկավոր է՝

1. առանձնացրեք այն նիշքերը, որոնք անհրաժեշտ են ուղղարկել կծկված թղթապանակ,
2. մկնիկի աջ կոճակով սեղմեք ձեր ընտրած նիշքին և ենթացանկում ընտրեք *Ռողղարկել* հրամանը,
3. *Ռողղարկել* հրամանի ենթացանկում ընտրեք «կծկված zip folder» հրամանը: Առանձնացված նիշքերը կրառնան կծկված և կտեղավորվեն թղթապանակում՝ կոչված նիշքի անունով, որի նշանի վրա եղել է պլոտեր: Ելակետային նիշքերի կմնան անձեռնմխելի,
4. անունը, որը անձայն յուրացվել է թղթապանակում, խորհուրդ է տրվում փոխարինել մեկ ուրիշով, ավելի ինֆորմատիվ անունով:

Windows Vista օպերացիոն համակարգն առաջարկում է սեղմված թղթապանակի անունը փոխարինել՝ անմիջապես նրա ստեղծումից հետո: Մուտքագրեք նոր անունը և սեղմեք **«Enter»**: Որպեսզի թողնենք անունը, որն արդեն իսկ գոյություն ուներ սեղմեք **«Esc»** կոճակը կամ թղթապանակի պատուհանի որևէ ազատ տարածության վրա:

5. Որպեսզի սկավառակում ազատ տարածք բացենք՝ մկնիկի աջ կոճակով սեղմեք որևէ նիշքին և բացված ենթացանկում ընտրեք *Հեռացնել* հրամանը: Ընտրեք **Այո** հաստատում՝ հեռացնելու նիշքը:

### Նիշքերի և սեղմած թղթապանակների դուրս բերումը

Սեղմած թղթապանակներում գտնվող նիշքերը բացելու համար, խորհուրդ է տրվում այն համեմ թղթապանակից:

Պատկերեք՝

1. սկավառակի և թղթապանակի պարունակությունը, որտեղ պահպանվում է սեղմված թղթապանակը: Սեղմված

թղթապանակը կարելի է որոշել իր վրա գտնվող պատկերային նշանով,

2. մկնիկով երկակի սեղմեք կծկված թղթապանակին, որի հետևանքով դուք կտեսնեք նրա պարունակությունը: Նիշքերը, որոնք պահպանվում են կծկված թղթապանակում, մնուն են կծկված այնքան ժամանակ, մինչև դուք դուրս չբերեք նրանց այդտեղից,
3. առանձնացրեք նիշքերը, որոնք անհրաժեշտ է դուրս բերել կծկված թղթապանակից: Մկնիկի աջ մասով սեղմեք դուրս եկող նիշքերի որևէ նշանին և ընտրեք **Կրկնօրինակել** հրամանը:
4. պատկերեք թղթապանակի պարունակությունը, որտեղ ցանկանում եք տեղափորել նիշքերը՝ դուրս բերված կծկված թղթապանակից,
5. մկնիկի աջ ստեղնով սեղմեք որևէ ազատ տարածության վրա՝ կրկնօրինակելով նիշքը, և բացված ենթացանկում ընտրեք **Տեղադրել** հրամանը:

Նիշքերը դուրս բերելուց հետո (կծկման թղթապանակից), դուք կարող եք աշխատել նրանց հետ ըստ ցանկության:

## ԳԼՈՒԽ 6

### Միացում Համացանցին


Այսօր դժվար է պատկերացնել ինֆորմացիոն դարաշրջանի մարդուն առանց համակարգչի և համակարգիչն առանց համացանցի: 21-դարի զիսավոր ձեռքբերումներից մեկը համացանցն է, որի օգտագործումը դարձել է մարդու գործունեության անբաժանելի մասը:

World Wide Web (www)

Համաշխարհային սարդոստայն է, որը հանդիսանում է համակարգիչների միջոցով տեղեկատվության փոխանակման և ներկայացման լայն տարածում գտած արդյունավետ համակարգ: Մատների միքանի հարված ստեղնաշարին և ամբողջ աշխարհ ձեր «ձեռքի տակ» է:

Ի՞նչ է հարկավոր համակարգիչը համացանցին միացնելու համար՝


- հատուկ սարքերի առկայություն համակարգչում, որոնք կապահովեն միացումը Համացանցին (օրինակ Մոդեմ),
- համացանց ծառայության մատակարարի առկայություն
- ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր է դիտել Web-էջեր:



Եթե առկա են բոլոր պայմանները կարելի է կատարել հետևյալ գործողությունները՝

1. կտտեցնել Մեկնարկային Ցանկը և ընտրել Ղեկավարման վահանակը (Control Panel)
2. բացված պատուհանից ընտրել Ցանց և Համացանց և Ցանցի սպասարկման և կառավարման թույլտվություն հրանաները ( նկ. 6.1),
3. ընտրել Միացման հնարավորություն կամ ցանց հրանաը,
4. բացված համանուն երկխոսության պատուհանից ընտրել օրինակ՝ Միացման կարգավորումը ըստ

## Հեռախոսի տարբերակի և ապա կտտեցնել Հաջորդ կոճակը



### Նկար 6.1 Ցանց և համացանց

5. լրացնել բացված երկխոսության պատուհանը
6. Windows Vista օպերացիոն համակարգը կստեղծի համացանցին միանալու հնարավորություն և կփորձի այն ստուգել:
7. բացված երկխոսության պատուհանում աշխատաքնների ավարտից հետո կտտեցնել **Ավարտել** կոճակը:

Թվարկված գործողությունների բարեհաջող ավարտից հետո կարող ենք միանալ համացանցին՝

1. *Մեկնարկային ցանկից ընտրում ենք Համացանց հրամանը*
2. բացված երկխոսության պատուհանում ընտրում ենք **Միացնել** կոճակը:

Համցանցում կայքերը բնորոշվում են URL հատուկ հասցեներով, որոնք ծևավորվում են կենտրոնվ տարանջատվող կայքերի անուններով և կայքերի խմբերի կողերի հաջորդականություններով:

URL հասցեների վերջին մասը ձգգրտվում է կայքերի բովանդակության ու տեղաբաշխման հետ:

.edu	Կրթական կազմակերպություններ
.com	Գործարարական կազմակերպություններ
.gov	Կառավարական կազմակերպություններ
.org	Կազմակերպություններ
.am	Հայաստան
.ru	Ռուսաստան

### Windows XP-ի աշխատանքի հիմունքները

Եթե համակարգչի վրա տեղադրված է Windows XP գործառնական (օպերատիվ) համակարգը, ապա համակարգիչը միացնելուց հետո կատարվում է նրա բեռնումը: Ընդ որում, էկրանին հայտնվում է կամ *Սուստրագրվել* Windows երկխոստևյան պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել օգտվողի անունը և զաղտնաբառը՝ անհատական կայանքի բերման համար, կամ օգտագործողների ցանկը:

#### Windows XP-ի Սեղանը

Օգտագործողի մուտքից հետո էկրանին հայտնվում է Windows XP-ի Սեղանը (Desktop – նկ. 1.1):

Սեղանը պարունակում է իմ փաստաթղթերը (My Documents), իմ համակարգիչը (My Computer), իմ ցանցատեղերը (My Network Places), Internet Explorer, Ալբանան (Recycle Bin) ստանդարտ օբյեկտների պատկերակները և մի շարք այլ պատկերակներ, որոնց օգտագործողն ինքը կարող է տեղադրել սեղանի վրա:



Էկրանի ներքևում գտնվում է Խնդրագոտին (Taskbar), որի ձախ

անկյունում՝ **մեկնարկել** (Start) կոճակը:

Սեղանի վրա յուրաքանչյուր օբյեկտ ունի իր յուրահատկությունները, որոնց կարգավորման համար օգտագործվում է օբյեկտի հատկությունների պատուհանը: Դա վերաբերվում է Windows XP-ի բոլոր օբյեկտներին (կարձատներ, պանակներ, Սեղան, Խնդրագոտի): Օբյեկտի հատկությունները դիտելու համար անհրաժեշտ է մկնիկի նշորդը տեղադրել օբյեկտի պատկերակի վրա, սեղմել աջ կոճակը և բացվող օժանդակ ցանկից ընտրել Հատկություններ (Properties) տողը: Ընդ որում էկրանին բացվում է տվյալ օբյեկտի հատկությունների պատուհանը:

## Windows-ի դեկավարում

Windows-ում հրամանների մեջ մասը կարելի է կատարել մկնիկի միջոցով: Մկնիկի հետ է կապված դեկավարման ակտիվ էլեմենտը՝ մկնիկ նշորոք (սլար՝ , կամ այլ պատկեր), էկրանի վրա: Հարթ մակերևույթի վրա մկնիկի շարժումից նշորոք շարժվում է սեղանի վրայով և այն կարելի է տեղադրել օբյեկտների պատկերակների կամ դեկավարման տարրերի վրա:

Մկնիկի միջոցով դեկավարման հիմնական մեթոդներն են՝

- **մեկ կտորոց** - մկնիկի ձախ կոճակի արագ սեղմում ու բաց թողում
- **երկկտորոց** - կարճ ժամանակահատվածում մկնիկի ձախ կոճակի երկու սեղմում
- **աջ կոճակի կտորոց** - մկնիկի աջ կոճակի արագ սեղմում ու բաց թողում
- **տեղափոխում** - մկնիկի տեղափոխում՝ սեղմած պահած ձախ կոճակը (կատարվում է էկրանային օբյեկտի տեղափոխում)
- **սպասում** - մկնիկի տեղադրում օբյեկտի պատկերակի վրա և սպասում (այս դեպքում սովորաբար էկրանին հայտնվում է օբյեկտի բնութագրի մասին կից հուշագիր):

## Windows XP-ի էկրանի օբյեկտները

### Մեկնարկել



**Մեկնարկելը** (Start) Windows-ի սեղանի ամենակարևոր տարրերից մեկն է:

Մկնիկի նշորով **Մեկնարկային ցանկի** հրամաններով տեղաշարժվելիս, բացվում են դրանց համապատասխան ենթացանկերը, որոնց գործուն տողն առանձնանում է մուլտ շերտով: Ընտրված ծրագրի բեռնման կամ պահակի բացման համար անհրաժեշտ է գտնել պահանջվող տողը և կտուացնել մկնիկով:

**Մեկնարկային ցանկի** գործարկնան համար կարելի է նաև օգտագործել **Ctrl+Esc** ստեղների զուգակցումը կամ ստեղնաշարի Windows կոճակները՝ : Այս երկու մեթոդներն արդյունավետ են, եթե մեկնարկել կոճակը բացակայում է էկրանի վրա, կամ այն փակված է այլ պատուհաններով, ինչը լինում է խնդրագույն հատկություններում որոշ ռեժիմներ իրականացնելիս:

### Մեկնարկային ցանկ

Մեկնարկային ցանկի հրամանները նախատեսված են հավելվածների (Windows-ում տեղադրված ծրագրերի) բեռնման, նիշերի փնտրման, համակարգի տարբեր բաղադրիչների

հատկությունների, օգնություն և աջակցում ստանալու, Windows XP համակարգի դուրս գալու և այլնի համար:



## Նկ. 7.2. Մեկնարկային ցանկ

Մեկնարկային ցանկը կարևոր տարր է նաև Windows-ի հետ աշխատանքը վերջացնելու համար: Այստեղ է Անջատել (Shut down) կետը, որից անհրաժեշտ է օգտվել, հոսանքն անջատելուց առաջ, համակարգի հետ աշխատանքը գրագետ ավարտելու համար:

## Մեկնարկային ցանկի բաղադրիչ տարրեր

Բոլոր ծրագրերը All Programs Windows-ի պահակ է, որում գտնվում են մյուս պահակները, ինչպես նաև մի շարք ծրագրերի բերնման պատկերակներ, որոնք այստեղ ավելանում են համակարգչում նոր ծրագրեր տեղադրելիս:

Իմ վերջին փաստաթղթերը My Recent Documents այս պահակը պարունակում է համակարգչում օգտագործված վերջին 15 փաստաթղթերը: Այն մաքրելու համար անհրաժեշտ է կատարել հետյալ գործողությունները.

1. Start կոճակի օժանդակ ցանկից ընտրել Հատկություններ (Properties) հրամանը: Կրացվի Խնդրագոտու և Մեկնարկային ցանկի հատկություններ (Taskbar and Start Menu Properties) երկխոսության պատուհանը:
2. Սեղմել Ընտելացնել (Customize) կոճակը: Կրացվի Ընտելացնել Մեկնարկային ցանկը (Customize Start Menu) երկխոսության պատուհանը:

Լրացնողիչ (Advanced) ներդիրում սեղմել Մաքրել ցուցակը (Clear List) կոճակը: Հսկիչ վահանակ (Control Panel) նախատեսված է համակարգի բաղադրիչների կարգավորման համար: Այս պահակի օգնությամբ կարելի է կարգավորել ստեղնաշարի, մկնիկի, ձայնի, տառատեսակի, էկրանի հատկություններ, տեղադրել նոր սարքավորում կամ ծրագրային ապահովում և այլն:

Մեկնարկային ցանկի տողերով տեղաշարժվել կարելի է մկնիկի կամ ուղղորդող ստեղների օգնությամբ:

Մեկնարկային ցանկի հրամանները կարող են ունենալ ենթացանկեր: Այդպիսի հրամաններն աջ կողմում ունեն սլաքի նշան, որոնց վրա կտտողը բերում է ընտրված հրամանի ենթացանկի բացմանը:

Մեկնարկային ցանկից կամ ենթացան-կերից ծրագրերի բերնման համար անհրաժեշտ է մկնիկով կտտացնել ընդգծված տողի վրա:

*Տպիչներ և հեռապատճեններ Printers and Faxes* թույլ է տալիս տեղադրել տպիչներ և կարգավորել տպման բաղադրիչները:

*Որոշել* Search բացում է մուտք որոնման համակարգ՝ հիմնականում նիշքերի և պանակների փնտրման համար:

*Օգնություն և աջակցում Help and Support* մուտք է ապահովում Windows-ի տեղեկատու համակարգ:

*Աշխատացնել Run...* Այս կետը բացում է հրամանի տող ունեցող ոչ մեծ պատուհան, հավելվածների բեռնման համար:

*Դուրս գրվել Log Off...* Օգտագոծվում է այն դեպքում, եթե օպերատիվ համակարգում գրանցված են մի քանի օգտագործողներ, որոնցից յուրաքանչյուրը համակարգը կարգավորում է իր հայեցողությամբ.

- *Log Off* - ապահովում է մի օգտագործողի աշխատանքի ավարտը և համակարգիչը մյուսին հանձնելը՝ աւանց այն անշատելու,
- *Switch User* - թույլ է տալիս նոր օգտագործողին մտնել համակարգ՝ չընդհատելով նախորդ օգտագործողի աշխատանքը:

Անջատում Shut down... Գործառնական համակարգի հետ աշխատանքն ավարտելու միջոց է: Բացում է աշխատանքի ավարտ երկխոսության պատուհանը, հետևյալ հրամաններով՝

- *Stand by` Նիրի* - համակարգիչն անցնում է էներգասպառման խնայողության ռեժիմ, ընդ որում բացված հավելվածները և պանակները չեն փակվում, ինչը թույլ է տալիս արագ վերականգնել աշխատանքը.
- *Shut down* - անջատում է համակարգիչն այնպես, որ կարելի է ապահով անջատել հզորությունը
- *Restart` Վերամեկնարկ* - ավարտում է ձեր աշխատաշրջանը, անջատում Windows-ը և կրկին մեկնարկում:

## Խնդրագոտի

Սեղանի ներքելի մասում գտնվում է առանձնացված գոտի՝ խնդրագոտին (Taskbar-ն. 7.3): Այս գոտու ձախ անկյունում գտնվում է Մեկնարկել կոճակը և Արագ թողարկում (Quick Launch) գոտին, իսկ աջ անկյունում՝ ուժգնության և ժամանակի հատկությունների նշանները:



Նկ. 7.3 Taskbar

## Խնդրագոտու բաղադրիչ տարրերը

Օբյեկտը	Անվանումը	Նշանակությունը
	Start	Նախատեսված է մեկնարկային ցանկը բացելու, ինչպես նաև ծրագրերի և հավելվածների բեռնման համար
	Quick Lounch Արագ թողարկում	Արագ թողարկման գործիքագոտին օգտագործվում է առավել հաճախ օգտագործվող հավելվածների բեռնման համար
	Ժամացույց Clock	Մյունիկի նշորդ ժամացույցի վրա տեղադրելիս գալիս է ընթացիկ օրվա ամսաթվով հուշագիր Լեզվային դաշտ: Թույլ է տալիս տեսնել և ընտրել ստեղնային դասավորությունը (սովորաբար հնարավոր է անցում անգլերեն և ռուսերեն լեզուներին)
	Language bar	

Աշխատանքի ընթացքում, բացելով հավելվածներ, ծրագրեր, փաստաթղթեր և պանակմեր, խնդրագոտու վրա հայտնվում են բացված պատուհաններին համապատասխան կոճակներ: Խնդրագոտու վրա մեկ հայացք զցելով՝ կարելի է ասել՝ ինչ հավելվածներ են տվյալ պահին աշխատում: Անհրաժեշտ հավելվածին արագ անցում կատարելու համար բավական է մկնիկով կտրացնել տվյալ հավելվածին համապատասխանող կոճակի վրա: Անցում կատարել կարելի է նաև Alt + Tab ստեղների գուգակցումով: Այս դեպքում հայտնվում է պատուհան, որի վերևի մասում գտնվում են բոլոր գործուն պատուհանների պատկերակները, ներքևի մասում՝ այն խնդրի անվանումը, որին առաջարկվում է այդ պահին անցում կատարել: Գործուն պատուհաններով հակառակ ուղղությամբ անցում կատարելու համար օգտագործվում է Alt + Shift + Tab ստեղների գուգակցումը: Անհրաժեշտ պատկերակի ընտրությունից հետո պետք է բաց թողնել Alt կոճակը, և էկրանին կիայտնվի ընտրված խնդրի պատուհանը: Ըստ լրեյան խնդրագոտին տեղադրվում է էկրանի ստորին մասում: Ինչպես և նախին տարբերակներում, Windows XP-ն հնարավորություն է ընձեռում տեղադրել խնդրագոտին էկրանի աջ կողմում, ձախ կողմում կամ վերևում: Տեղի փոփոխության դեպքում աշխատանքը խնդրագոտու հետ չի փոխվում: Տեղի փոփոխության համար հարկավոր է մկնիկով բռնել այն և ձախ կոճակը սեղմած պահած տեղափոխել էկրանի այն մաս, որտեղ տեղափոխվելու է խնդրագոտին: Եթե խնդրագոտին կընդունի նոր դիրք, բաց թողնել մկնիկը:

## ԳԼՈՒԽ 8

### Նիշքերը, պանակները և կարճատները Windows XP - ում Նիշքեր

Windows XP-ում նիշքերի հետ աշխատանքն առավելագույնս պարզեցված է: Ցանկացած նիշք կարելի է բացել նրա վրա մկնիկի երկուտողով՝ անկախ նիշքի տեսակից:

Windows XP-ում թույլատրելի են նիշքերի և պանակների երկար անվանումներ՝ մինչև 255 սիմվոլ: Նիշքերի անունները բաղկացած են երկու հատվածից, որոնք բաժանվում են միմյանցից կետով: Վերջին կետից աջ գտնվող սիմվոլները կոչվում են նիշքի ընդայնում: Ընդլայնումները մեծամասամբ բաղկացած են 3 սիմվոլից, սակայն Windows XP-ն պաշտպանում է նաև մեծ թվով սիմվոլներ:

#### Նիշքերի բացում

Windows XP-ում փաստաթղթերի մեծամասնությունը կարելի է բացել առանց նախապես տվյալ փաստաթղթին համապատասխանող հավելվածի բերննանը: Դա հնարավոր է այն բանի շնորհիվ, որ նոր հավելվածի (ծրագրի) տեղադրման ժամանակ օպերացիոն համակարգը գրանցում է բոլոր այն նիշքերի տեսակները, որոնք կարող են բացվել տվյալ հավելվածով: Հետազյում՝ նիշքը բացելու ժամանակ, Windows-ը դիտում է, թե ինչ ընդլայնում ունի նիշքը և գործարկում է այդ տիպի համար գրանցված հավելվածը: Օրինակ՝ համակարգում MS Word ծրագիրը տեղադրելիս այդ ծրագրով ստեղծվող փաստաթղթերի համար համակարգում գրանցվում է DOC ընդլայնումը: Այդ իսկ պատճառով DOC ընդլայնմամբ փաստաթղթեր բացելիս համակարգը բերնում է MS Word ծրագիրը:


Բացելու համար այն նիշքերը, որոնց ընդլայնումները գրանցված են համակարգում, անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողություններից մեկը:

- Երկուտացնել նիշքի նշանի վրա,
- մկնիկի նշորդը տեղադրել նիշքի պատկերակի կամ անվանման վրա և սեղմել Enter,
- սեղմել մկնիկի աջ կոճակը և բացվող ցանկում ընտրել Open հրամանը:

Եթե այս գործողություններից հետո Windows-ը չճանաչի նիշքի տեսակը, ապա եկրանին կրացվի ծրագրերի ընտրման (Open With) երկխոսության պատուհանը (Ան. 8.1): Այստեղ ծրագրերի (Programs) ցանկից կարելի է նշել նիշքը բացելու համար համապատասխան հավելվածը:

## Պանակներ

Պանակները տարածություններ են, որտեղ դասավորվում են նիշքերը: Պանակի ներսում կարելի է տեղադրել մեկ այլ պանակ՝ օգտագործելով կրել-բերելու («Drag and Drop») սկզբունքը: Դա թույլ է տալիս պետք արդյունավետ կազմակերպել աշխատանք՝ տարբեր խնդիրների համար տարբեր պանակներ օգտագործելու հաշվին:




Նկ. 8.1. Open With  
Երկխոսության պատուհանը

## Պանակի պատուհանի կառուցվածք

Պանակի պատուհանը պարունակում է մի շարք պարտադիր էլեմենտներ (նկ. 8.2):

**Վերնագրի տող** - այստեղ գրվում է պանակի անվանումը: Վերնագրի տողի միջոցով, մկնիկի օգնությամբ, կատարվում է պանակի պատուհանի տեղափոխում սեղանի վրայով: Պատուհանը տեղաշարժելու համար անհրաժեշտ է տեղադրել մկնիկի նշորդը վերնագրի վրա ցանկացած տեղ (բացառությամբ դեկավարման կոճակմերի և սիստեմային կոճակի), և մկնիկի ձախ կոճակը սեղմած պահած տեղափոխել այն: Պատուհանն անհրաժեշտ վայր տեղադրելուց հետո բաց թողնել մկնիկի կոճակը:




Դաստիարակություն

### Նկ. 8.2. Պանակի պատուհանի օրինակ

**Պատուհանի դեկավարման կոճակներ - Աշխատանքի ընթացքում հնարավոր է պատուհանը մեծացնելու կամ փոփքացնելու (ընդհուած մինչև խնդրագոտու վրա կոճակի չափի) անհրաժեշտություն լինի: Այս գործողություններն իրականացվում են պատուհանի դեկավարման կոճակների միջոցով, որոնք տեղադրված են պատուհանի վերնագրի սողի աջ անկյունում:**

**Սիստեմային նշան -** գտնվում է ցանկացած պանակի վերևի ձախ անկյունում: Այս նշանի կտորոցվ բացվում է ցանկ, որը կոչվում է սիստեմային (նկ. 8.3): Այստեղ առկա են հրամաններ, որոնք կատարում են նույն գործողությունները, ինչ պատուհանի դեկավարման կոճակները՝ թույլ են տալիս դեկավարել պատուհանի չափսերը: Windows համակարգում շատ են կրկնությունները: Գործողությունների մեջ մասը կարելի է կատարել բազմաթիվ տարրեր եղանակներով: Յուրաքանչյուր օգտվում է այս եղանակից, որն իրեն հարմար է: Սիստեմային նշանի օգնությամբ պատուհանի չափսերի դեկավարումը կարող է օգտակար լինել, եթե մկնիկը չի աշխատում: Այս դեպքում անհրաժեշտ է սեղմել Alt + Spacebar ստեղների գուգակցումը: Բացվող ցանկի տողերով տեղաշարժվել կարելի է ստեղնաշարի ուղղորդող ստեղների օգնությամբ: Սիստեմային ցանկի հրամաններով կարելի է նաև պատուհանը տեղաշարժել (Move Շարժել) և փոփոխել



### Նկ.8.3. Սիստեմային ցանկ

դեկավարումը կարող է օգտակար լինել, եթե մկնիկը չի աշխատում: Այս դեպքում անհրաժեշտ է սեղմել Alt + Spacebar ստեղների գուգակցումը: Բացվող ցանկի տողերով տեղաշարժվել կարելի է ստեղնաշարի ուղղորդող ստեղների օգնությամբ: Սիստեմային ցանկի հրամաններով կարելի է նաև պատուհանը տեղաշարժել (Move Շարժել) և փոփոխել

նրա չափսերը (Size՝ Չափս)՝ պատուհանի եզրերից ձգելու միջոցով:


**Ցանկերի գոտի** – պանակների պատուհանների համար ցանկերի գոտին ունի ստանդարտ տեսք: Այս ցանկերի ցանկացած կետի կտորոցով դեպի ներքև բացվում են ցանկեր, որոնք թույլատրում են կատարել գործողություններ պատուհանի պարունակության կամ ամբողջ պատուհանի հետ: Այս ցանկերի հրամանների օգտագործումն այնքան էլ արդյունավետ չէ, բայց դրանք լրիվ երաշխավորված հրամաններն են տվյալ պատուհանի հետ աշխատելու համար մինչև ավելի արդյունավետ հնարավորությունների հետ ծանոթանալը:

**Գործիքագոտի** – պարունակում է հաճախ օգտագործվող հրամանների կոճակներ: Աշխատանքի ընթացքում հարմար է դրանցից օգտվելը, բայց սահմանափակ է հրամանների քանակը: Ժամանակակից հավելվածների պատուհաններում գործիքագոտին կարգավորվող է և օգտագործողն ինքն է որոշում, թե ինչ հրամանների կոճակներ տեղադրել այնտեղ:

#### Գործիքագոտու կոճակների նշանակությունները

Կոճակ	Անվանում	Նշանակույթուն
	Ետ Back	Իրականացնում է անցում նախորդ դիտված պանակին
	Առաջ Forward	Իրականացնում է անցում այն պանակին, որը դուք դիտել եք ընթացիկից հետո
	Վեր Up	Իրականացնում է անցում վերևի մակարդակի պանակին
	Տեսքեր Views	Կառավարում է պանակի օբյեկտների ներկայացման ձևը
	Որոնել Search	Անհրաժեշտ տարրերի որոնում
	Պանակներ Folders	Բացում է պանակների աստիճանական կառուցվածքով տեղաշարժերի հատված աշխատանքային դաշտի ձախ մասում

**Աշխատանքային դաշտ** - այստեղ արտապատկերվում են պանակում գտնվող օբյեկտների պատկերները, ընդ որում արտապատկերման եղանակը կարելի է ղեկավարել:



**Պատոման գոտիներ** - եթե օբյեկտների քանակը շատ մեծ է կամ պատուհանի չափսերը շատ փոքր են, ապա պատուհանի աջ և ստորին եզրերում հայտնվում են գոտիներ, որոնց միջոցով կարելի է պատուհանի պարունակությունը տեղաշարժել Վերև, ներքև, ձախ կամ աջ և դիտել այն ամբողջությամբ: Պատոման գոտին ունի սահող նշիչ (մոխրագույն ներկված ուղղանկյուն շերտ) և վերջնակետային կոճակներ (, ): Պատումը կատարվում է երեք եղանակով:

- Վերջնակետային կոճակների վրա կտտոցով
- Սահող նշիչի տեղափոխումով
- Նշիչից վերև կամ ներքև պտտման գոտու վրա կտտոցով:

**Վիճակագոտի** - այստեղ դուքս են բերվում լրացուցիչ, հաճախ կարևոր տեղեկություններ: Օրինակ, եթե պատուհանում կան սիստեմային կամ թաքնված օբյեկտներ, դրանք կարող են չարտապատկերվել պատուհանում, բայց վիճակագոտում կլինի դրանց նասին ինֆորմացիա:


**Հասցեագոտի** - այստեղ գրվում է տվյալ պանակի մուտքի ձանապարհը, ինչը հարմար է նիշքային կառուցվածքում կողմնորոշվելու համար: Հասցեագոտին, աջ կողմուն գտնվող բացող կոճակի օգնությամբ (նկ. 8.4), թույլ է տալիս կատարել արագ մուտք նիշքային կառուցվածքի մյուս բաղադրիչներին:

ԳԼՈՒԽ 9

Առնել

**ՄԵՂԱԿԱՐԿԵԼ**  $\Rightarrow$  Որոնել (Start  $\Rightarrow$  Search) հրամանի ընտրության դեպքում բացվում է Որոնել (Search) հրամանի ենթացանկը՝ նախատեսված ստորև թվարկված տեղեկատվությունների փնտրման համար՝

- **Նկարներ, երաժշտություն կամ տեսապատճեններ** (Pictures, music, or video) - փնտրում է նիշքեր, որոնք պարունակում են պատկեր, երաժշտություն կամ վիդեօ ինֆորմացիա.
  - **Փաստաթղթեր** (Documents) - փնտրում է տարբեր տիպի փաստաթղթեր.
  - **Բոլոր նիշքերը և պանակները** (All files and folders) - փնտրում է նիշքեր և պանակներ.
  - **Տպիչներ, համակարգիչներ կամ մարդկանց** (Printers, computers, or people) - փնտրում է տպիչներ (ցանցում) կամ մարդկանց (հասցեազդում), ինչպես նաև իրականացնում է որոնում Համացանցում:



#### **Ակտ .9.1. Որոնման արդյունքներ երկխոսության պատուիան**

իսկ երկրորդ մասը՝ այդ պարամետրերին համապատասխան որոնումների արդյունքները դիտելու համար:

Փոտրել կարելի է տարբեր եղանակներով՝ կախված այն բանից, թե ինչ է հայտնի նիշքի նաև անվանումը: Եթե հայտնի է նիշքի անունը կամ անվան մի մասը, սակայն հայտնի չէ դրա տեղը, ապա **Նիշքի լրիվ կամ մասնակի անվանումը** (All or part of the file name) որոնման տողում անհրաժեշտ է գրել նիշքի անունն ամբողջությամբ կամ մասամբ և սեղմել **Որոնում** (Search) կոճակը: Աշխատանքային դաշտի աջ մասում բերվում են որոնման արդյունքները: Եթե փնտրվող նիշքը գտնվել է, սակայն որոնումը դեռ շարունակվում է, կարելի է այն կանգնեցնել **Կանգ (Stop)** կոճակի կոտորոցով: Նոր նիշք փնտրելու համար պետք է հետ գնալ **Ետ (Back)** կոճակի միջոցով և սկսել նոր որոնում:

Նիշքը կարելի է գտնել նաև ըստ նրա պարունակության՝ **Նիշքի բառ կամ արտահայտություն** (A word or phrase in the file) որոնման տողում լրացնելով նիշքի պարունակությունից ինչ-որ բառ կամ արտահայտություն:

Կարելի է ավելի նեղացնել փնտրման ոլորտը, եթե մոտավոր հայտնի է նիշքի գտնվելու տեղը: Դրա համար **Ղիտորչել** (Look in) որոնման տողի աջ անկյան սլաքի միջոցով բացվող ցանկից անհրաժեշտ է ընտրել գտնվելու տեղը (օրինակ՝ *Տեղային կոշտ սարքավարներ / Local Harddrives (C; D;), Սեղան / Desktop, Տեղային սկզբառակ / Local Disk (C:)* կամ *(D:)* և այլն), իսկ եթե ցուցակը չի գոհացնում, կարելի է օգտվել **Զննել** (Browse) կոճակից, որի կոտորոց բացվում է **Զննել պանակ** (Browse For Folder) երկխոսության պատուհանը (նկ. 2.7), որն, ինչպես արդեն գիտենք, պահանջվող օբյեկտի մուտքի ձանապարհը գտնելու ստանդարտ միջոց է: Այստեղ կարելի է նշել ցանկացած պանակ՝ որոնում իրականացնելու համար:

Եթե հայտնի չէ նիշքի անունը, սակայն հայտնի է նրա տեսակը, այսինքն՝ ընդունումը (ցանկացած նիշքի անվանում բաղկացած է երկու հատվածից, որոնք բաժանվում են միմյանցից կետով. վերջին կետից աջ գտնվող սիմվոլները կոչվում են նիշքի **ընդունում**), ապա նիշքի ամբողջ կամ մասնակի անվանը որոնման տողում անհրաժեշտ է լրացնել \*, կետ և նիշքի ընդունումը (օրինակ՝ \*.doc): \*-ը նշանակում է անհայտ թվով սիմվոլներ: Եթե հայտնի չէ նիշքի անվան միայն մեկ կամ հայտնի թվով սիմվոլներ, ապա դրանց փոխարեն կարելի է գրել ?, որը նշանակում է միայն մեկ սիմվոլ (օրինակ՝ եթե հայտնի չէ Report2005.doc նիշքի անվան վերջին սիմվոլը՝ 5 թվանշանը, ապա պետք է գրել Report200?.doc): Եթե նիշքը ունի երկար անուն և այն պարունակում է դատարկ սիմվոլներ, ապա այն պետք է վերցնել չակերտների մեջ, որպեսզի որոնումն իրականացվի ողջ արտահայտությամբ, այլ ոչ թե կտոր-կտոր (օրինակ՝ “My pictures”, կրերվի բոլոր այն նիշքերը և պանակները, որոնց անվան մեջ առկա է և My, և pictures բառերը):

**Այսքանով Որո՞նման արդյունքները պատուհանի հնարավորությունները չեն սահմանափակվում:** Այն ունի փնտրման գործիքներ, որոնք թույլ են տալիս գտնել նիշքերը կամ պանակներն ըստ կերպափոխման ժամանակի, չափի, տեսակի և այլ պարամետրերի: Սրանցից օգտվելը բավականին հեշտ է, և օգտագործողը կարող է ինքնուրույն կողմնորոշվել, թե իրեն ինչ է պետք ընտրել առաջարկվող տարբերակներից, մասնավորապես՝ այս պարամետրերից որևէ մեկի հնարավորությունները տեսնելու համար անհրաժեշտ է դրանք բացել կից սլաքների միջոցով :

**Ե՞րբ է այն կերպափոխվել (When was it modified?)** բաժնում առկա են հետևյալ հնարավորությունները՝

- Չեմ հիշում - Don't remember
- Անցյալ շաբաթ - Within the last week
- Անցյալ ամիս - Past month
- Անցյալ տարի - Within the past year
- Հատկորոշել ամսաթվեր - Specify dates:

Առաջին չորս տարբերակների ընտրությունը պարզ է, իսկ վերջինով կարելի է նշել նիշքի կամ պանակի փոփոխման (Modified Date), ստեղծման (Created Date) կամ մատչնան (Accessed Date) կոնկրետ ժամանակահատված:

**Ի՞նչ չափի է (What size is it?)** բաժնում առկա են հետևյալ հնարավորությունները՝

- Չեմ հիշում - Don't remember
- Փոքր (100ԿԲ-ից փոքր) – Small (less than 100KB)
- Միջին (1մԲ-ից փոքր) – Medium (less than 1MB)
- Մեծ (1մԲ-ից մեծ) – Large (more than 1MB)
- Հատկորոշել չափ - Specify size (in KB):

Վերջին տարբերակի դեպքում կարելի է նշել առնվազն (at most) ինչ չափի կամ ավելի քան (at least) ինչ չափի օրինակ փնտրել:

**Լրացնից ընտրանքներ (More advanced options)** բաժնում կարելի է՝

- Նշել նիշքի տեսակը Նիշքի տիպ (Type of file) թափվող ցանկից
- Նշել որպեսզի որոնի նաև թաքնված նիշքերը և պանակները (Search hidden files and folders)
- Իրահանգավորել որպեսզի որոնում իրականացվի ենթապանակներում (Search subfolders) և այլն:

### Աղբանակ

Աղբանակ պանակ է, որ տեղադրված է անմիջապես սեղանի վրա: Աղբանակի նշանն արատաքինից հիշեցնում է  դույլի:

Recycle Bin

Այստեղ են տեղադրվում ջնջված նիշքերը, որոնց հնարավոր է կամ վերականգնել, կամ վերջնական ջնջել:

Աղբամանի պարունակությունը դիտելու համար կարելի է օգտվել հետևյալ միջոցներից:

- մկնիկի նշորդով կանգնել աղբամանի պատկերակի վրա և երկստացնել,
- մկնիկի նշորդով կանգնել աղբամանի պատկերակի վրա, մկնիկի աջ կտորոցով բացվող օժանդակ ցանկից ընտրել *Բացել* (Open) հրամանը: Այս հրամանը կատարելուց հետո կրացվի աղբամանի պատուհանը:

Աղբամանը, ինչպես սկավառակը, ունի սահմանափակ ծավալ: Այդ իսկ պատճառով ուշ, թե շուտ այն կլցվի: Հետևաբար այն պետք է մաքրել: Եթե չնաքրել աղբամանն, ապա համակարգն ինքնուրույն կշնչի առավել հին օբյեկտները:

Աղբամանը կարելի է մաքրել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ՝ հեռացնելով միայն առանձին տարրեր:

Աղբամանից առանձին ընտրված նիշքեր ջնջելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողություններից մեկը.

- սեղմել **Ջնջել** (Delete) կոճակը գործիքագոտու վրա,
- գտնվելով Աղբաման Երկխոսության պատուհանում՝ կատարել *Նիշք* ⇒ **Ջնջել** (File ⇒ Delete) հրամանը,
- ընտրել օժանդակ ցանկի **Ջնջել** (Delete) հրամանը, որ պատկերվում է ընտրված տարրերից մեկի վրա մկնիկի աջ կտորոցով:

Աղբամանն ամբողջությամբ մաքրելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողություններից ցանկացածը.

- աղբամանի պատուհանում ընտրել *Նիշք* ⇒ **Դատարկել** աղբամանը (File ⇒ Empty Recycle Bin) հրամանը,
- ընտրել օժանդակ ցանկի **Դատարկել աղբամանը** (Empty Recycle Bin) հրամանը, որ հայտնվում է աղբամանի պատկերակի վրա մկնիկի աջ կտորոցով:

Երկու դեպքում էլ բացվում է ջնջման հաստատման Երկխոսության տուփը: Այս պատուհանի **Այո (Yes)** կոճակի կտորով բերում է աղբամանում գտնվող բոլոր նիշքերի հեռացմանը, իսկ **Ոչ (No)** կոճակինը՝ չեղյալ է դարձնում նիշքերի հեռացումն աղբամանից:

## Հեռացված նիշքերի, կարճատների և պանակների վերականգնում

Եթե օբյեկտները տեղակիրխվել են աղբաման, որոնք կարելի է վերականգնել իրենց նախկին տեղերում: Դրա համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- բացել աղբամանի պատուհանը,
- ընտրել պահանջվող օբյեկտները,
- ընտրել ցանկերի գոտու Նիշք  $\Rightarrow$  Վերականգնել (File  $\Rightarrow$  Restore) հրամանը կամ օժանդակ ցանկի Վերականգնել (Restore) հրամանը:

Ընտրված նիշքերը, պահանջվող օբյեկտները կվերականգնվեն այն պահանջմանը և պատուհաններում, որտեղ դրանք գտնվել են մինչև ջնջելը: Պահանջանակների վերանկանգնման դեպքում վերականգնվում են նաև դրանց գտնվող բոլոր օբյեկտները:

### Նիշքերի վերջնական ջնջում

Եթե օբյեկտների ջնջման նախազգուշության միջոցները անհարմարություն են ստեղծում, ապա կարելի է դրանցից հրաժարվել: Դրա համար Աղբաման Հատկություններ (Recycle Bin Properties) երկխոսության պատուհանի Համընդհանուր (Global) ներդիրում հարկավոր է նշան դնել Չտեղափոխել նիշքերն աղբաման: Ջնջելուց հետո անմիջապես հեռացնել նիշքերը (Do not move files to the Recycle Bin. Remove files immediately when deleted) տողի դիմաց:

Չնայած այս դեպքում նիշքերի ջնջման հաստատման համար հարցման պատուհանը հայտնվում է, օբյեկտներն աղբաման չեն տեղափոխվում և անվերադարձ կորում են:


Ջնջել օբյեկտները, շրջանցելով աղբամանը, կարելի է մի քանի միջոցով.

- Տեղափոխել օբյեկտները աղբաման կամ տեղադրել նրա նշանի վրա՝ սեղմած պահելով Shift կոճակը: Կյու դեպքում հեռացումը կատարվում է առանց նախազգուշացնան:
- Նշել օբյեկտները և սեղմել Shift + Delete ստեղների զուգակցումը: Կիայտնվի ջնջման հաստատման երկխոսության տուիքը: Ջնջման հաստատման դեպքում օբյեկտները կորում են անվերադարձ:
- Կատարել Նիշք  $\Rightarrow$  Ջնջել (File  $\Rightarrow$  Delete) հրամանը՝ սեղմած պահելով Shift ստեղնը: Կիայտնվի ջնջման հաստատման երկխոսության տուիքը: Հեռացումը հաստատելու դեպքում օբյեկտները վերջնական կորում են:

Օբյեկտի օժանդակ ցանկից ընտրել Ջնջել (Delete) հրամանը՝ սեղմած պահելով Shift ստեղնը: Կիայտնվի ջնջման հաստատման երկխոսության տուիքը: Ջնջումը հաստատելու դեպքում օբյեկտները վերջնական ջնջվում են:

## Օբյեկտների դասավորում

Ըստ լույսայն նիշքերը պանակներում դասավորվում են իրենց անվանումների այբբենական կարգով:



Նկ. 9.2. Օբյեկտների  
դասավորման  
տարրերակները

Դասավորում է նորից այբբենական հերթականությամբ, բայց արդեն հիմք ընդունելով նիշքերի տեսակների (ծրագրի, որով այն ստեղծվել է) անվանումները :

**Փոփոխման/Ազատ տարածքի** (By Modified/Free Space) - փոփոխված/ազատ տարածք՝ դասավորում է նիշքերն ըստ իրենց ստեղծման ամսաթվի (Եթե դասավորվում են նիշքեր պանակում) կամ ըստ սկավառակի վրա ազատ տարածքի (Եթե դասավորվում են սկավառակների նշանները):

Բացի այդ, այս ցանկում առկա են մի քանի հրամաններ, որոնց կարելի է միացնել կամ անջատել.

**Ցուցադրել խմբերում** (Show in Groups) - կատարում է բաժանում խմբերի:

**Ինքնաշխասավորում** (Auto Arrange) - դասավորում է օբյեկտները կողք կողքի հաջորդական դասավորությամբ:

**Հավասարեցնել ըստ ցանցի** (Align to Grid) - թույլ է տալիս ավտոմատ դասավորել օբյեկտներն ըստ որոշակի ցանցի: Ի դեպ, այս կետը հասանելի է նիստին այն դեպքում, եթե նիշքերը չեն համապատասխանում համարվող դասավորումին:

Օբյեկտների դասավորման փոփոխության համար կարելի է օգտագործել Դասավորել պատկերներն ըստ (Arrange Icons) հրամանը Տեսք (View) ցանկից կամ պանակի դատարկ տարածքի օժանդակ ցանկից: Բացվող ցանկի (նկ. 9.2) միջոցով կարելի է դասավորել օբյեկտներն ըստ տարրեր բաղադրիչների:

**Անվան** (By Name) - դասավորում է նախ պանակները, այնուհետև նիշքերը՝ իրենց անվանումների այբբենական հերթականությամբ:

**Չափի** (By Size) – դասավորում է ֆալերն իրենց մեծությամբ :

**Տիպի** (By Type) – օբյեկտները


դասավորում է նորից այբբենական հերթականությամբ, բայց արդեն հիմք ընդունելով նիշքերի տեսակների (ծրագրի, որով այն ստեղծվել է) անվանումները :

## Նիշքերի և պանակների ստեղծում և անվանափոխում

Նիշքեր և պանակներ, ստեղծելու պարզագույն միջոցը մկնիկի աջ կողակի կտորոցն է պանակի ազատ դաշտում: Բացվող օժանդակ ցանկից անհրաժեշտ է ընտրել New կետը, որով բացվում է նոր ցանկ հետևյալ կետերով՝ Պանակ (Folder), Կարձատ (Shortcut) և բոլոր այն ծրագրերը, որոնք տեղադրված են գործառնական համակարգում (նկ.9.3): Ընտրելով Պանակ տողը՝ անմիջապես ստեղծվում է նոր պանակ, որի անունն անմիջապես կարելի փոխել: <անանձան ձևով ստեղծվում են տարբեր ծրագրերի նոր նիշքեր, ինչպես նաև կարձատներ, որի մասին նանրանան նկարագրված է նախորդ գլուխում:

Արդեն ստեղծված պանակները, նաև նիշքերը կարելի են անվանափոխել օժանդակ ցանկի Վերանայել (Rename) տողի միջոցով, որն ընտրելու դեպքում անվան տողը և հնարավոր է կատարել փոփոխություններ: Նույնը կարելի է անել նաև նշված նիշքի կամ պանակի դեպքում F2 ստեղնի օգնությամբ, որը սեղմելիս նշված օբյեկտի անունն ակտիվանում է: Կարելի է օգտագործել տառեր, թվեր, բացատներ և որոշ կետադրական նշաններ, բացառությամբ ստորև ներկայացված սիմվոլներից՝

\ : / \* ? “ > < |



Նկ. 9.3.

ակտիվանում է անվան տողը և հնարավոր է կատարել փոփոխություններ: Նույնը կարելի է անել նաև նշված նիշքի կամ պանակի դեպքում F2 ստեղնի օգնությամբ, որը սեղմելիս նշված օբյեկտի անունն ակտիվանում է: Կարելի է օգտագործել տառեր, թվեր, բացատներ և որոշ կետադրական նշաններ, բացառությամբ ստորև ներկայացված սիմվոլներից՝

### Տեղափոխումն ու պատճենումը Խմբագրել ցանկի հրամանների և ստեղնաշարի օգնությամբ

Նիշքերի և պանակների տեղափոխումն ու պատճենումն իրենցից ներկայացնում են երկու հաջորդական գործողություններ՝ օբյեկտի տեղադրում փոխանակման պահեստ (clipboard - անտեսանելի հիշողության դաշտ) և պահեստից օբյեկտի տեղադրում պահանջվող վայր:

Օբյեկտների տեղափոխման (պատճենան) համար կարելի է օգտագործել Խմբագրել ցանկի հետևյալ հրամանները և ստեղնաշարի գուգակցումները.

- Խմբագրել ⇒ Կորել (Edit ⇒ Cut) հրամանը,

- օժանդակ ցանկի Կտրել (Cut) հրամանը, որը հայտնվում է օբյեկտների վրա մկնիկի աջ կտտողով,գործիքագոտու Կտրել (Cut) կոճակը՝ 
- Ctrl+X ստեղների գուգակցումը:

Օբյեկտների պատճեննան համար նախատեսված են Խմբագրել ցանկի հետևյալ հրամանները և ստեղնաշարի գուգակցումները.

- Խմբագրել⇒Պատճենել (Edit ⇒ Copy) հրամանը,
- օժանդակ ցանկի Պատճենել (Copy) հրամանը, որը հայտնվում է օբյեկտների վրա մկնիկի աջ կտտողով,
- գործիքագոտու Պատճենել (Copy) կոճակը 
- Ctrl+C ստեղների գուգակցումը:


Վերջին գործողությունը՝ օբյեկտի սոսնձումը (տեղադրումը) փախանակման պահեստից երկու դեպքերի համար էլ նույնն է: Այն կարելի է հրականացնել հետևյալ տարրերակներով.

- Խմբագրել⇒Սոսնձել (Edit ⇒ Paste) հրամանը,
- օժանդակ ցանկի Սոսնձել (Paste) հրամանը, որը հայտնվում է օբյեկտների վրա մկնիկի աջ կտտողով,
- գործիքագոտու Սոսնձել (Paste) կոճակը 
- Ctrl+V ստեղների գուգակցումը:


## ԳԼՈՒԽ 10

### Windows XP-ի հիմնական պարամետրերի կայանքներ Մուտք Windows XP-ի Հսկիչ վահանակ

Հսկիչ վահանակը հանդիսանում է Windows-ի կայանքների հիմնական միջոցը: Windows XP-ի Հսկիչ վահանակը փոքր ինչ տարրերվում է Window-ի այլ տարրերակների հսկիչ վահանակներից: Այստեղ այն պարունակում է ոչ թե առանձին պատկերակների հավաքածու, այլ բաշխված է խմբերի (նկ. 10.1):



Նկ. 10.1. Հսկիչ վահանակը



Նկ. 10.2. Հսկիչ վահանակը  
Կառահ տեսօռու

Ցանկության դեպքում կարելի է Հսկիչ վահանակը միացնել կարգի տեսքով՝ ընտրելով **Փոխանջատել Կարգի տեսքին** (Switch to Classic View) կետը: Այս դեպքում դաշտում պատկերվում է բոլոր համանելի պատկերակների ցանկը (նկ. 10.2):

Հսկիչ վահանակի բաղադրիչ տարրերի անզերեն և հայերեն արտահայտությունների թագմանությունները ընդգրկված են անզերեն հայերեն բառանում:

Հսկիչ վահանակի պատուհանը բացել կարելի է հետևյալ եղանակներից մեկով՝

- **ՍԵԼՈՆԱՐԿԵԼ** (Start) ցանկում ընտրելով Հսկիչ վահանակ (Control Panel) կետը,
- **ԻՄ ՀԱՆԱԿԱՐԳԻՀՅԾ** (My Computer) պահակի ձախ անկյունում ընտրելով **Փոխել կայանք** (Change a settings) տողը:

Հսկիչ վահանակի երկխոսության պատուհանը պարունակում է թագմարիվ պատկերակներ, որոնց ետևում «թաքնված» են ծրագրեր՝ նախատեսված համակարգչի կայանքների փոփոխման համար:

Ստորև դիտարկված են Հսկիչ վահանակի օգնությամբ Windows XP-ի մի քանի հիմնական պարամետրերի կայանքները:

## Ցուցադրել հատկություններ

Մեր օրերում բավականին մեծ թվով մարդիկ օրվա մեջ մասն ան են կացնում համակարգչի դիմաց, ընդ որում նրանց հայացքը սևովում է էկրանին՝ որպես ինֆորմացիայի արտացղման հիմնական սարքի: Որպեսզի համակարգչի հետ աշխատանքը լինի հարմարավետ, անհրաժեշտ է կարգավորել սեղանը և մյուս տեսանելի համակարգերն այնպես, որ դրանք առավելագույնս համապատասխանեն օգտագործողի պահանջներին և ձաշակին:

Էկրանի պարամետրերը կարգավորելու համար օգտագործվում է Ցուցադրել Հատկություններ (Display Properties) երկխոսության պատուհանը (նկ. 10.3), որը բացելու համար կա երկու եղանակ՝



Նկ. 10.3. Ցուցադրել Հատկություններ երկխոսության պատուհանը

1. Աշխատաքանային սեղանի վրա որևէ դատարկ տեղ մկնիկի աջ կոճակով կտտացնել և բացվող օժանդակ ցանկից ընտրել Հատկություններ (Properties) հրամանը:
2. Սեղմել Մեկնարակել (Start) կոճակը, այնուհետև բացվող ցանկում ընտրել Հսկչ վահանակ (Control Panel) հրամանը, իսկ Հսկչ վահանակում ընտրել էկրանի նշանը՝ Ցուցադրել (Display):  
Էկրանի հատկություններ երկխոսության պատուհանը պարունակում է հետևյալ ներդիրները.
  - Ոճեր - Themes ,
  - Սեղմ - Desktop,
  - Վահանապահ - Screen Saver,
  - Արտաքինք - Appearance,
  - Կայանքներ - Settings:աս) կոճակը:

## Սեղան

Սեղան ներդիրը (Ակ. 10.4) թույլ է տալիս ընտրել ֆոնային պատկեր խորք (Background) ցուցակից, ինչպես նաև ֆոնի համար ընտրել պատկեր այլ պանակներից՝ սեղմելով Զննել (Browse) կոճակը:




Ակ. 10.4.

3. Զգել (Stretch) – պատկերն ընդարձակվում է ըստ էկրանի երկարության և լայնության:

Եթե ցանկություն չկա օգտագործել ֆոնային պատկեր, ապա սեղանը կլցվի գույնով, որը կարելի է ընտրել Գույն (Color) բացվող ցուցակից:


Սեղան ներդիրում նաև գտնվում է Ընտելացնել սեղանը (Customize Desktop) կոճակը, որով բացվում է Սեղանի միույթներ (Desktop Items) երկխոսության պատուհանը (Ակ. 10.5): Այս պատուհանը թույլ է տալիս ընտրել, թե ինչ ստանդարտ պատկերակներ պատկերել սեղանին: Կարելի է անջատել և միացնել այնպիսի պատկերակներ, ինչպիսիք են՝ Իմ փաստաթղթերը (My Documents), Իմ համակարգիչը (My Computer), Իմ ցանցատեղերը (My Network Places), Internet Explorer համապատասխան օբյեկտի դիմաց նշում (), դնելու կամ հանելու միջոցով:



Ակ. 10.5. Սեղանի միույթներ երկխոսության պատուհանը

## Վահանապահ

Այս ներդիրը (նկ. 10.6) թույլ է տալիս ընտրել Վահանապահ (Screen Saver` բառացի թարգմանաբար նշանակում է էկրանի պահապահ):



Նկ. 10.6. Վահանապահ ներդիրը

Եթե համակարգից չի օգտագործվում, որոշակի ժամանակահատվածից հետո էկրանին կարող է հայտնվել շարժական պատկեր: Բավական է շարժել մկնիկը կամ սեղմել որևէ ստեղն, որպեսզի այդ պատկերը վերանա: Կարգավորելու համար այն ժամանակահատվածը, որից հետո կհայտնվի Վահանապահը, Սպասել (Wake) դաշտում լրացվում են համապատասխան րոպեները: Վահանապահն ընտրվում է Վահանապահ դաշտի թափվող ցանկից: Սեղմելով Նախատեսք

(Preview) կոճակը՝ կարելի է դիտել՝ ինչ վահանապահ կունենա էկրանը, եթե որոշ ժամանակ այն թողնել անգործ: Բացի այդ, կարելի է փոփոխության ենթարկել Վահանապահի կայանքները՝ օգտվելով Կայանքներ (Settings) կոճակից:

Վահանապահը կարելի է պահպանել գաղտնաբառի միջոցով, ինչի համար հարկավոր է նշան դնել Սպասելատելիս՝ պաշտպանել զաղտնաբառով (On resume, Password protected) տողի դիմաց, և Վահանապահից նորմալ աշխատանքային ռեժիմին անցնելու համար կպահանջվի այն գաղտնաբառը, որով բերնվել է համակարգը:

## Մկնիկի հատկություններ

Յուրաքանչյուր օգտագործող ունի մկնիկի հետ աշխատելու իր պահանջները: Մկնիկի հատկություններն ըստ յուրաքանչյուրի պահանջներին կարգավորելու համար օգտագործվում է Մկնիկ Հատկություններ (Mouse Properties) երկխոսության պատուհանը (նկ. 4.9), որը բացվում է Հայիշ Վահանակ (Control Panel) պանակում Մկնիկ (Mouse) պատկերակի վրա երկվտացնելիս:

Մկնիկ Հատկություններ երկխոսության պատուհանը պարունակում է 5 ներդիր՝

- Կոճակներ – Buttons,
- Ցուցիչներ – Pointers,
- Ցուցիչի ընտրանքներ – Pointer Options,
- Ալիվ – Wheel,
- Սարքաշար – Hardware:

Ստորև բերված են այս ներդիրների մանրամասն նկարագրությունները:

## Կոճակներ

Կոճակներ ներդիրում (նկ. 10.7) կարելի է կարգավորել հետևյալ պարամետրերը.

- Կոճակների կազմաձևում (Button configuration) - կարգավորում է մկնիկի ձախակողմյան կամ աջակողմյան դասավորությունը: Համակարգի հետ աշխատողների մեջամասնությունն աջիկ են, և նրանց հարմար է մկնիկը բռնել աջ ձեռքով, իսկ սեղմել աջ ցուցանատով, որի տակ, սովորաբար, գտնվում է մկնիկի ձախ ստեղնը: Իսկ ձախիկներին ավելի հարմար է մկնիկը բռնել ձախ ձեռքով, և սեղմել ձախ ձեռքի ցուցանատով, որի տակ այս անգամ կգտնվի մկնիկի աջ ստեղնը: Ըստ լրեյայն՝ մկնիկի կայանքներում դրված է լինում աջակողմյան աշխատանքը. փոխելու համար պետք է նշան դնել Փոխանցատել առաջնային և Երկրորդական կոճակները (Switch primary and secondary buttons) սոող դիմաց:



**Նկ. 10.7. Մկնիկ Հատկություններ  
Երկխոսության պատուհանը**

- Երկտոտացման արագությունը (Double-click speed) – սողնակը Դանդաղից Արագ (Slow - Fast) տեղաշարժելու միջոցով՝ թույլ է տալիս կոճատել կամ երկարացնել մկնիկի երկու կտորների միջև այն արագությունը, որը կհասկացվի որպես Երկկտոտոց: Ընտրված արագության հարմարությունը կարելի է ստուգել անմիջապես այս Երկխոսության պատուհանում՝ պատկերված պանակը երկտոտացնելու միջոցով՝ ի վերջո ընտրությունը կանգնեցնելով առավել հարմար

արագության վրա:


- Կտտակողակ (ClickLock) – թույլատրում է գունանշել կամ քաշել՝ առանց սեղմապահելու մկնիկի կոճակը: Տեղակայելու համար անհրաժեշտ է կարձ սեղմել մկնիկի կոճակը, թողարկելու համար՝ նորից կտտացնել մկնիկի կոճակը:

## Ցուցիչներ

Եթե մկնիկի նշորդի ձևը և չափը չեն գոհացնում, կարելի է օգտվել

### Ցուցիչներ (Pointers - նկ. 10.8)

Ներդիրից: Այն առաջարկում է ընտրել մկնիկի նշորդի ձևը, գույնը, չափը, որը մկնիկն ընդունում է մի վիճակից մյուսին անցնելիս: Ուրվակազմ (Scheme) դաշտում, որը տեղադրված է այս ներդիրի վերին հատվածում, առկա են բավականին մեծ թվով սխեմաներ, որոնք իրենցից ներկայացնում են մկնիկի նշորդների հավաքածուներ՝ որոշված բոլոր վիճակների համար: Ընտրված ուրվակազմի հիմնական նշորդը պատկերված է ցանկից աջ գտնվող դաշտում, իսկ մյուս վիճակները՝ ներդիրի ստորին բաժնում:



Նկ. 10.8. Ցուցիչներ ներդիրը

Անհրաժեշտ ուրվակազմն ընտրելուց հետո հարկավոր է սեղմել Լավ (OK) կոճակը, որից հետո ընտրված սխեմայի նշորդները կվիրառվեն համակարգում աշխատող բոլոր հավելվածների աշխատանքների ժամանակ:

Բացի այդ մկնիկի յուրաքանչյուր վիճակի համար նշորդ կարելի է ընտրել առանձին: Որևէ վիճակի համար ընտրություն կատարելու համար անհրաժեշտ է նշել այն և մկնիկի ձախ ստեղնով երկվառական կամ նշել և սեղմել Զննել (Browse) կամակը: Որից հետո բացվող պատուհանում ընտրել մեկ այլ տարբերակ: Որևէ ուրվագիծի վրա փոփոխություններ անելուց հետո, ստացված նոր ուրվագիծը հնարավոր է պահպանել՝ սեղմելով Պահել որպես (Save As) կոճակը: Բացվում է նոր պատուհան, որտեղ անհրաժեշտ է գրել նոր ուրվագիծի անունը, և այն այլ անունով կավելանա ուրվագիծը ցանկում: Օգտագործել լույսայն (Use Default) կոճակը թույլ է տալիս վերականգնել ուրվագիծի սկզբնական վիճակը:

Կարելի է նաև ջնջել ցանկացած ուրվագիծ՝ Զնջել (Delete) կոճակի օգնությամբ:

## Ցուցիչի ընտրանքներ

Այս ներդիրն (նկ. 10.9) օգտագործվում է տեղափոխման արագության փոփոխության, տեսանելիության, երկխոսության պատուհանի սկզբնական դիրքի կարգավորման համար:

Այս պարունակում է 3 հատկություն.


- *Տեղափոխում (Motion)* – թույլ է տալիս կարգավորել մկնիկի նշորդի տեղափոխման արագությունը: *Հավելել ցուցիչի ճշգրտությունը* (Enhance pointer precision) տողի դիմաց նշան դնելով բարձրացվում է նշորդի դեկավարվելիությունը փոքր հեռավորությունների վրա տեղափոխվելիս, ինչպես նաև

տեղի է ունենում նշորդի ավելի արագ դանդաղեցում՝ մկնիկը դանդաղեցնելիս կամ կանգնեցնելիս:

- *Երկխոսության տուփի սկզբնական դիրքը (Snap to)* – այս դաշտում նշան դնելը թույլ է տալիս երկխոսության պատուհաններ բացելիս կատարել մկնիկի նշորդի ավտոմատ անցում նրանում ըստ լրելյան նշանակված կոճակին: Որոշ ծրագրերում նշորդն ավտոմատ տեղադրվում է երկխոսության պատուհանի կենտրոնում:

- *Տեսանելիությունը (Visibility)* – թույլ է տալիս դրոշակաների միջոցով սահմանել հետևյալ պարամետրերը՝

- Ցուցադրել ցուցիչի հետքը - Display pointer trails,
- Մուտքագրելիս թաքցնել ցուցիչը - Hide pointer while typing,
- Ցուցադրել ցուցիչի տեղադրությունը՝ ԿՌՎՐ (Ctrl) ստեղնը սեղմելու ժամանակ:




Նկ. 10.9.

## Սարքաշար

Այս ներդիրը կարգավորում է մկնիկը՝ որպես ֆիզիկական սարք, մասնավորապես այստեղ երևում է մկնիկի մոդելը, արտադրող ֆիրման և այլն:

## Ստեղնաշարի հատկություններ

Ստեղնաշարի կայանքները ևս գտնվում են **Հայիչ վահանակում:** Ստեղնաշար Հատկություններ (Keyboard Properties) երկխոսության պատուհանը (Ակ. 10.10) բացելու համար անհրաժեշտ է երկխոսուացնել **Հայիչ վահանակ** պանակի Ստեղնաշար (Keyboard) նշանի վրա:




Ակ. 10.10 Ստեղնաշար Հատկություններ  
երկխոսության պատուհանը

Այն ունի երկու ներդիր.

- **Արագություն - Speed,**
- **Սարքաշար - Hardware**  
(նման է մկնիկի  
**Սարքաշար ներդիրին):**

## Տառատեսակներ

Տառատեսակները գտնվում են **Հայիչ վահանակ** պանակի **Տառատեսակ (Fonts)** երկխոսության պատուհանում (Ակ. 10.11):




Ակ. 10.11. Տառատեսակ երկխոսության պատուհանը

Այստեղ անմիջապես նկատվում է, որ տառատեսակների պատկերները 3 տիպի են՝ TT (True Type), O (Open Type) և A: Բանը նրանում է, որ տառատեսակները լինում են կետային և վեկտորային: Կետային տառատեսակները կազմվում են ուղղանկյան մեջ կետերի կոմբինացիայով: Դրանք արագ են աշխատում, բայց վատորակ են տպագրության դեպքում: Բացի այդ համար չեն կատարել չափերի փոփոխության գործողություններ: Վեկտորային տառատեսակների սիմվոլները թեք կոնտուրներ են՝ տրված մաթեմատիկական բանաձևերի միջոցով: Սա թույլ է տալիս տարբեր չափերի համար տառատեսակները չպահել: Ա տիպի տառատեսակները կետային են, իսկ TT և O (որոնց միջև էական տարբերություն չկա)՝ վեկտորային:

### Ամսաթվի և ժամանակի հատկություններ

Ամսաթվի և ժամանակի հատկությունների համար ծառայում է *Հայիչ վահանակ պանակի Ամսաթիվ և ժամանակ Հատկություններ* (Date and Time Properties) երկխոսության պատուհանը (նկ. 10.12), որը բացվում է *Ամսաթիվ և ժամանակ* (Date and Time) պատկերակի վրա երկկտտացնելիս:




Նկ. 10.12

Այն բաղկացած է երկու ներդիրից.

- *Ամսաթիվ և ժամանակ* (Date & time) – տալիս է սիստեմային ժամանակի և օրացույցի փոփոխության հնարավորություն:
- *Ժամային գոտի* (Time Zone) – հանձնարարվում է ժամային գոտին: Ինչպես նաև, այս ներդիրի հնքնաբար կարգաբերել ժամացուցն ամառային ժամանակի (Automatically adjust clock for daylight saving changes) տողի դիմաց դատարկ վանդակում նշան դնելով, հնարավոր է կարգավորել այնպես, որ համակարգիչն ավտոմատ կատարի ժամանակի փոփոխությունները՝ անցումը «ձմեռային» և «ամառային» ժամանակներին:

**ՀԻՇԵ՞Ք:** Նախազգուշական միջոցառումների արհամարիումը կարող է վտանգավոր լինել ձեր առողջության համար:

Համակարգչային սեղանի առջև ոչ հարմարավետ նստելը կարող է ուսերի, գոտկատեղի ցավերի պատճառ դառնալ: Նստեք ազատ առանց ավելորդ լարվածության:



Երկարատև ու լարված աշխատանքի դեպքում աչքերը հոգնուն են, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում յուրաքանչյուր 5 րոպեն մեկ հայացքը կտրել էկրանից և նայել որքան հնարավոր է հեռու գտնվող առարկայի:

## ՏԵՐՄԻՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ (Անգլերեն-Հայերեն)

<b>A</b>	
Access	Մատչել
Accessibility	Մատչելիություն
Accessories	Պիտույքներ
Active	Գործուն
Add	Հավելել
Address Bar	Հասցեազոտի
Address Book	Հասցեագիրը
Administrative Tools	Վարչական գործիքներ
Advanced	Լրացուցիչ
Airbrush	Փոշեվրձին
Align to Grid	Հավասարեցնել ըստ ցանցի
All Programs	Բոլոր ծրագրերը
Appearanc	Արտաքին
Arrange Icons	Դասավորել պատկերներն ըստ
At least	Ավելի քան
At most	Առնվազն
Audio	Զայնային
Audio Devise	Զայնասարք
Auto Arrange	Ինքնադասավորում
<b>B</b>	
Back	Ետ
Backup	Պահեստ
Beckground	Խորք
Browse	Ձնել
Brush	Վրձին
Button	Կոճակ
By Modified	Փոփոխման
By Name	Անվան
By Size	Չափի

By Type	Տիպի համար
	<b>C</b>
Calculator	Հաշվիչ
Camera	Տեսախցիկ
Cancel	Չեղարկել
Cascade	Սանդղացանկ
Center	Կենտրոն
Change	Փոխել
Character Map	Գրանշանների քարտեզ
Character repeat	Կրկնել գրանշանը
ClickLock	Կտտակողական
Close	Փակել
Color	Գույն
Command Prompt	Հրամանի հոլշակ
Communications	Հաղորդակցություններ
Configuration	Կազմաձևում
Connection	Կապակցում
Control Panel	Հսկիչ վահանակ
Copy	Պատճենել
Create	Ստեղծել
Ctrl	Կռվո
Curve	Կոր
Customize	Ընտելացնել
Cut	Կտրել
	<b>D</b>
Date	Ամսաթիվ
Default	Լռելայն
Delete	Ջնջել
Desktop	Սեղան
Disk Cleanup	Սկավառակի մաքրում
Disk Defragmenter	Սկավառակի ապամասնատիչ
Display	Ցուցադրել

Double-click	Երկկտսոց
<b>E</b>	
Edit	Խմբագրել
Ellipse	Էլիպս
Entertainment	Ժամանց
Eraser	Ջնջիչ
Event	Դեաք
Explorer	Հետախույզ
Extension	Ընդլայնում
<b>F</b>	
Fast	Արագ
Favorites	Ընտրյալներ
Fax	Հեռապատճեն
File	Նիշք
Fill With Color	Լցնել գույնը
Finish	Ավարտ
Floppy	Ճկուն սկավառակ
Folder	Պանակ
Font	Տառատեսակ
Forward	Առաջ
Free Space	Ազատ տարածք
Free-Form	Ազատ ոճ
<b>G</b>	
Game Controllers	Խաղի կառավարիչներ
Global	Համընդհանուր
<b>H</b>	
Hardware	Սարքաշար
Help	Օգնություն
Hidden	Թաքնված
Horizontally	Հորիզոնական
Hardware	Սարքաշար
Help	Օգնություն

Hidden	Թաքնված
Horizontally	Հորիզոնական
	I
Icon	Պատկեր
Inactive	Անգործուն
Installation Program	Տեղադրման ծրագիր
Internet	Համացանց
Item	Միավոր
	K
Keyboard	Ստեղնաշար
Language Options	Լեզվային ընտրանքներ
Line	Գիծ
Load	Բեռնել
Local Disk	Տեղային սկավառակ
Local Harddrives	Տեղային կոշտ սարքավարներ
Local settings	Անհատական կայանք
Log in	Մուտքագրվել
Log Off	Դուրս գրվել
Long	Երկար
Look in	Դիտողոշել
	M
Magnifier	Խոշորացույց
Maintenance	Սպասարկում
Maximize	Արակելացնել
Menu	Ցանկ
Menu Bar	Ցանկերի գոտի
Minimize	Նվազեցնել
Modem	Կապիչ
Modify	Կերպափոխել
Motion	Տեղափոխում
Mouse	Մկնիկ
Move	Շարժել

Music	Երաժշտություն
My Computer	Իմ համակարգիչը
My Documents	Իմ փաստաթղթերը
My Network Places	Իմ ցանցատեղերը
My Recent Documents	Իմ վերջին փաստաթղթերը
<b>N</b>	
Narrator	Պատմիչ
Network Connections	Ցանցային կապակցումներ
Next	Հաջորդը
No	Ոչ
None	Ոչ մեկը
Notepad	Նոթատետր
<b>O</b>	
OK	Լավ
On-Screen	Վահանային
Open	Բացել
Options	Ընտրանքներ
<b>P</b>	
Paint	Նկարիչ
Password	Գաղտնաբառ
Paste	Սոսնձել
Pencil	Մատիտ
Performance	Արդյունավետություն
Phone	Հեռախոս
Pick Color	Ընտրել գույնը
Picture	Նկար
Pointer	Ցուցիչ
Polygon	Բազմանկյուն
Position	Դիրք
Precision	Ճշգրտություն
Preview	Նախատեսք
Primary	առաջնային

Printer	Տպիչ
Properties	Հատկություններ
	<b>Q</b>
Quick Launch	Արագ թողարկում
	<b>R</b>
Rectangle	Ուղղանկյուն
Recycle Bin	Ալբաման
Secondary	Երկրորդական
Select	Ընտրել
Setting	Կայանք
Setup	Տեղակայել
Shut down	Անջատել
Short	Կարճ
Shortcut	Կարճատ
Show in Groups	Ցուցադրել խմբերում
Size	Չափս
Slow	Դանդաղ
Sound	Չայն
Sound Recorder	Չայնագրում
Speech	Խոսք
Speed	Արագություն
Stand by	Նիրի
Start	Մեկնարկել
Start menu	Մեկնարկային ցանկ
Status Bar	Վիճակագոտի
Stop	Կանգ
Stretch	Զգել
Subfolders	Ենթապանակ
Support	Աջակցում
Switch	Փոխանջատել
Synchronize	Համաժամել
System	Համակարգ

System Information	Համակարգի տեղեկություններ
System Tools	Համակարգային գործիքներ
<b>T</b>	
Taskbar	Խնդրագոտի
Text	Գրվածք
Theme	Ոճ
Tile	Կցաշարել
Time	Ժամանակ
Time Zone	Ժամային գոտի
Toolbar	Գործիքագոտի
Tools	Գործիքներ
Trail	Հետք
Transfer	Փոխանցել
Type	Տիպ
<b>U</b>	
Undo	Հետարկել
Up	Վեր
User Account	Օգտվողի հաշիվ
User name	Օգտվողի անուն
Utility Manager	Օժանդակ ծրագրերի կառավարիչ
<b>V</b>	
Vertically	Ուղղահայաց
Video	Տեսապատկեր
View	Տեսք
Visibility	Տեսանելիություն
Voice	Չայն
Volume	Ուժգնության
Volume Control	Ուժգնության կառավարում
<b>W</b>	
Wate	Սպասել
Wheel	Անիվ
Wizard	Մոդ

Word Pad	Բառատեսոր
	Y
Yes	Այո

### Սուրբ թվարկված են Հայից վահանակի խմբերը

- Appearance and Themes – Արտաքինը և ոճերը
  - Network and Internet Connections – Ցանցի և Համացանցի կապակցումներ
  - Add or Remove Programs – Հավելել կամ հեռացնել ծրագրեր
  - Sounds, Speech, and Audio Devices – Զայներ, խոսք և ձայնասարքեր
  - Performance and Maintenance – Արդյունավետություն և սպասարկում
  - Printers and Other Hardware – Տպիչներ և այլ սարքաշարեր
  - User Accounts – Օօտվողի հաշիվներ
  - Date, Time, Language, and Regional Options – Ամսաթիվ, ժամանակային, լեզվային և Տարածքային ընտրանքներ
  - Accessibility Options – Մատչելիության ընտրանքներ:
- Այս դեպքում դաշտում պատկերվում է բոլոր հասանելի պատկերակների ցանկը որոնք են՝
- Accessibility Options – Մատչելիության ընտրանքներ
  - Add Hardware - Հավելել սարքաշար
  - Add or Remove Programs – Հավելել կամ հեռացնել ծագրեր
  - Administrative Tools – Վարչական գործիքներ
  - Date and Time - Ամսաթիվ և ժամանակ
  - Display – Ցուցադրել
  - Folder Options – Պանակի ընտրանքներ
  - Fonts – Տառատեսակ
  - Game Controllers – Խաղի կառավարիչներ
  - Internet Options – Համացանցի ընտրանքներ
  - Keyboard – Ստեղնաշար
  - Mouse - Մկնիկ
  - Network Connections – Ցանցային կապակցումներ
  - Phone and Modem Options – Հեռախոսի և կապիչի ընտրանքներ
  - Power Options – Հոսանքի ընտրանքներ
  - Printers and Faxes – Տպիչներ և հեռապատճեններ
  - Regional and Language Options – Տարածքային և լեզվային ընտրանքներ
  - Scanners and Cameras – Ծրիչներ և տեսախցիկներ
  - Scheduled Tasks – Հերթագրված խնդիրներ
  - Sounds and Audio Devices – Զայներ և ձայնասարքեր
  - System – Համակարգ

- Taskbar and Start Menu – Խնդրագոտի և մեկնարկային ցանկ
- User Accounts – Օգտվողի հաշիվներ

## Առավել հաճախ օգտագործվող ծրագրերի ընդլայնումները

Ընդլայնում	Նիշքի տիպ	Ծրագիրը
exe	ծրագիր	ACDSee9.exe
com		Command.com
doc	Վիաստաքուլք (Microsoft Word)	Kursain ashx.doc
xls	աղյուսակ(Microsoft Excel)	naxahashiv.xls
txt	տեքստային վիաստաքուլք	namak.txt
ppt	Էլեկտրոնային ներկայացում (Microsoft PowerPoint)	Diplomain ashx.ppt
htm	Համացանցի էջ	Book.htm
html		Book.html
bmp	Նկարներ, լուսանկարներ	nkar.bmp
jpg		nkar.jpg
tif		nkar.tif
gif		nkar.gif
mp3	Երաժշտություն	Beatlse.mp3
mpeg	Վիդեօ	kino.mpeg
avi		tesholovak.avi
zip	Արխիվ ZIP	zekuycner.zip
rar	Արխիվ WinRAR	zekuycner.rar


## Համացանցի պատմությունը

ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության  
ստորաբաժանումները 1969 թվականին միավորությունը հրենց  
համակարգչային ցանցերը մի միասնական ցանցի ARPANET-ին, որը  
համարվում է համացանցի նախատիաբ:

UNIX-սերվերների և փոխանակման նպատակով գիտնականները մշակեցին արձանագրություն, որն իր պարզության, հուսալիության և սարդային անկախության շնորհիվ ընդունվեց նաև համացանցում: Այդպես ծնվեց TCP/IP արձանագրությունը:

Հետագա տարիներին համացանցը բուռն

նախարարության միավորությունը հաճախորդների միջև տվյալների 1983 թ. Բերքլիի համալսարանի տվյալների փոխանցման մի



զարգացում ունեցավ և 90ականների սկզբին ցանցում աշխատող սերվերների թիվը շուրջ 100000 էր: Այդուհանդերձ պետք էր «սպասել» 1993 թվականին (երբ սերվերների թիվը մեկ միլիոնից անց էր), երբ մասնավոր ծեռարկությունների և պետական հաստատությունների, ինչպես նաև ակադեմիական ինստիտուտների և ուսումնական հաստատությունների շահախնդիր մասնակցությամբ որպես ցանցի զարգացման նպատակ հրչակվեց մարդկության համընդհանուր ինֆորմատիզացիան: 1994 թ. ցանցում աշխատող համակարգիների թիվն արդեն 4 միլիոնից անց էր, իսկ 1999 թ. վերջի դրությամբ այդ թիվը մոտ 20 միլիոն էր: Համացանցի զարգացման համար կարևորագույն իրադարձությունը էր 1989 թ. փաստաթղթերի նկարագրության HTML լեզվի (HyperText Markup Language - հիպերտեքստի նշառուման լեզու) ստեղծումը միջուկային ֆիզիկայի Եվրոպական լաբորատորիայի (CERN) շենքարացի գիտնական թիմ Բերներս Լիի կողմից: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ World Wide Web (WWW) ծառայությունը, որը թույլ տվեց մի փաստաթղթի մեջ միավորել տեքստային և գրաֆիկական տվյալներ (իսկ ավելի ուշ՝ նաև այլ մուլտիմեդիա տարրեր), ինչպես նաև ցանկացած փաստաթղթի մեջ ներառել հղումներ ցանցում կամայական տեղերում գտնվող այլ փաստաթղթերի վրա: 1990 թ. այնտեղ ստեղծված առաջին բրոուզերը հենց այդպես էլ կոչվում էր՝ WWW. WWW ծառայությունը հիմնված է HTTP արձանագրության (HyperText Transfer Protocol հիպերտեքստի հաղորդման արձանագրություն) վրա, որն անմիջականորեն թույլ է տալիս ցանկացած փաստաթղթից անցում կատարել այլ տեքստային փաստաթղթի ընթերցմանը, երաշտության ունկնդրմանը, Tselnet կամ FTP արձանագրություններով միացման հաստատմանը և այլն:

Պետությունների զարգացման ռազմավարությունը, առանձին ապրանքների զանգվածային արտադրության վրա հիմնված հասարակությունը փոխարինվեց ինֆորմացիոն հասարակությամբ, որի հիմնական գրաղնունքն է ինֆորմացիայի պատրաստումը, մշակումը, պահանումը և տարածումը: **Ինֆորմացիոն հասարակության** համար ինֆորմացիան ամենակարևոր նյութական գոյապաշարն է: Ինֆորմացիոն հասարակության հիմքում ընկած են ինֆորմացիոն և հաղորդակցական տեխնոլոգիաները՝ որոնք կազմում են տնտեսության ամենաարագ զարգացող հատվածը և նորհարյուրանյակի առավել էական ինֆրակառուցվածքը: Չկան արտադրության, կրթության, սպասարկման, առևտուրի, պետական դեկավարման բնագավառներ, ուր ինֆորմացիոն և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը շահութաբեր չինի, ինչքարտահայտվում է արտադրողականության, արդյունավետության, հուսալիության, անվտանգության բարձրացմամբ, ինչպես նաև արժեքի և ժամանակի ինայտությամբ:





Սարգիս Շավարշի Ստեփանյան  
Հերմինե Արայի Սամվելյան

**Windows Vista Windows XP**  
Ուսումնական ձեռնարկ

Գեղարվեստական ձևավորում՝ Հ.Ա. Սամվելյան  
Սրբագրիչ՝ Ա.Բ. Կոստանյան  
Խմբագիր՝ Գ.Ս. Հովակյան  
Համակարգչային էջատող՝ Կ.Ս. Ազնավորյան

Տպաքանակը՝ 200 օրինակ  
Տպագրված է Երևանի Ճարտարապետության և շինարարության  
պետական համալսարանի Տպագրության և լրատվության կենտրոնում